

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴՆԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑ

ՀԱԿՈՐ ՄԱՆԱՆԴՅԱՆ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ
ՄԻ ՔԱՆԻ ՊՐՈՔԼԵՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Я. А. МАНАНДЯН

О НЕКОТОРЫХ ПРОБЛЕМАХ ИСТОРИИ
ДРЕВНЕЙ АРМЕНИИ И ЗАКАВКАЗЬЯ

ՀԱՅՊԵՏՉՐԱՑ
ԱՐՄԳԻՅ

Академия Наук Армянской ССР
Институт истории

Я. А. МАНАНДЯН

О НЕКОТОРЫХ ПРОБЛЕМАХ
ИСТОРИИ ДРЕВНЕЙ АРМЕНИИ
И ЗАКАВКАЗЬЯ

АФМГИЗ
ЕРЕВАН 1944

947.925.639

Հայկական ՍՍՌ-ի Գիտությունների Ակադեմիա
Պատմության Ինստիտուտ

9 (47.925)1
15-24

ՀԱԿՈՒ ՄԱՆԱՆԴՅԱՆ

ՄՏՈՒԳՎԱԾ Լ 1961 թ.

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ
ՄԻ ՔԱՆԻ ՊՐՈՔԼԵՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

~~16.232~~

A $\frac{11}{33756}$



ՀԱՅՊԵՏՐՈՍ
ՆՐԵՎԱՆ 1944



ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՆԳՐԿՈՎԿԱՍԻ ՄԻ ՔԱՆԷ ՊՐՈՐԷՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ¹

Հին Հայաստանի և Անդրկովկասի հնադուրյն յղատմութեան և աշխարհագրութեան խնդիրներէց շատերը, չնայած որ դրանց ուսումնասիրութեանը նվերված են բազմաթիվ աշխատութեաններ Արեւմտյան Եվրոպայի և Սովետական Միութեան դիտնահանների, դեռեւս հաստատուն ու վերջնական լիերպով լուսարանված չեն: Մինչև այժմ դեռ բախարար չափով պարզարանված չեն կիմմերական-սկյութական ցեղերի անդրկովկասյան արչավանքներէ ճանապարհները և նրանց ասոյատակած ու զբաղված շրջանների տեղագրութեանը: Գեո մութ է մնում և անորոշ նաև Քսենոփոնի ու Տասը հազարի նահանջի ուղին:

Այս խնդիրներն իմ այս ուսումնասիրութեան մեջ նորից ենթարկված են մանրախուզ քննութեան և նրանց արված է բոլորովին նոր լուսարանութեան: Ուսումնասիրութեան ընթացքում ինձ նեցուկ և ուղեցույց է ծառայել «Հայաստանի վլխավոր ճանապարհներն ըստ Պեկտինդերյան քարտեզի» իմ աշխատութեանը, որ բանալի է ծառայում սրտովական-աշխարհագրական բազմաթիվ խնդիրների լուծման:

Այլ խնդիրներից ամենահիմնականն է, հատկապես, նաև Մետոսի-Կոզքիսյան ճանապարհի պրոբլեմը, որ առաջին անգամն է հանդամանորեն քննութեան առնչում այս աշխատութեան մեջ: Հին այս ճանապարհը, որով հարավային Ռուսաստանի Մեծովյան շրջանները հաղորդակցել և կուլտուրական կապ են ունեցել Մերձավոր Արևելքի հետ՝ պատմագիտական և աշխարհագրական երկերում չառ քիչ է լուսարանված և, կարելի է ասել, որ դրեթե բոլորովին անտեսված է:

¹ Ձեկուցված է Հայկական ՍՍՌ Գիտութեանների Ակադեմիայի ընդհանուր ժողովում, 1944 թ. ապրիլի 11-ին:

Եվրոպական դեմոկրատիաները, աչքաթող անելով այդ հին ճանապարհը՝ Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի փոխադարձ հաղորդակցությունը ենթադրում են ոչ թե այդ ուղղությամբ, այլ երկու համեմատաբար մարտչելի լեռնանցքներով՝ Դարչալի և Դերբենտի կիրճերով: Նրանք կարծում են, որ, գլխավորապես, այս ճանապարհներով, Ալանաց և Կասպից դռներով, տեղի էին ունենում կիմֆերների, սկյութացիների, պարմասների և Կովկասյան լեռնականների արջավանդներն ու մուտքը Անդրկովկաս: Դերբենտի վրայով և Կասպից ծովի արևմտյան ափերով նրանք մատնանշում են նաև տարանցիկ առևտրի հին ճանապարհը Հնդկաստանից և Բարելոնիայից դեպի Տանայիս, որի միջնորդներն էին առևտները:

Այս իշխող կարծիքները, որ ընդհանուր հավանություն են արժանացել, ինչպես կտեսնենք, ո՛չ միայն վիճելի են, այլև անհավանական: Անտեսելով Մեոտիս-Կողքիսյան ճանապարհի ուղղմանն ու առևտրական մեծ դերը հին ժամանակներում՝ պատմագետները, իմ կարծիքով, բռնազբոսիկ ու անընդունելի լուսաբանություն են տվել սկզբնաղբյուրների մի շարք վիճակություններին, որ ներքև քննելու ենք:

Ինչպես մեր այս ուսումնասիրության ընթացքում կտեսնենք, պատմագետների մատնանշած նույն հենց վիճակությունների ուղղեր քննությունը հաստատվում է պատմական կարեվոր դերը, գլխավորապես, Մեոտիս-Կողքիսյան ճանապարհի: Մենք կտեսնենք, բացի այդ, որ հենց այս ճանապարհն է եղել այն գլխավոր կամուրջը, որի վրայով Ուրարտու և Հայաստան են մտել կիմֆերական, սկյութական ու ալեյի ու նաև սարմատական ցեղեր, որոնք Ուրարտական պետության անկումից հետո երկար ժամանակ իշխել են Հայկական բարձրավանդակի Հյուսիսային շրջաններում:

1. ԿԻՄՄԵՐԱԿԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՐԻ (ՄԵՐ ԹՎ. Ա.) ԱՐՇԱՎԱՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ ԵՎ ՆՐԱՆՑ ԳԱՂԹԱՎԱՅՐԸ ՆԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ինչպես հայտնի է հունական և ասորեստանյան աղբյուրների վիճակություններից, ութերորդ և ե֊թերորդ դարերում

մեր թվականությունից առաջ Անդրկովկասը և հարևան երկիրները ենթարկվեցին հարավային Ռուսաստանից եկող կիմերներին և սկյութացիներին արշավանքներին, որոնք տակնուվրա արին և ավերածության մասնեցին Մերձավոր Արևելքի երկիրները՝ Ուրարտուն, Ասորեստանը, Ասորիքը և Փոքր Ասիան:

Առաջին մեծ արշավանքին, որը տեղի ունեցավ ութերորդ դարում՝ մասնակցում էին, ինչպես կարելի է կուսակալ արքայրների որոշ ակնարկներից, թրակա-սկյութական դաշնակից ցեղերի մի մեծ խումբ, որի առաջնորդներն էին կիմերները: Արշավանքի ճանապարհը այս ցեղերի անդլիական դիմապահան Մինսը Cambridge Ancient History-ի երրորդ հատորում՝ մասնացույց է անում Գարյալի կերճով, ինչպես որ այդ ընդունված է եվրոպական պատմագետների նաև այլ աշխատություններում:

Բայց այս ենթադրությունը, որ արվում է առանց վաստական լուրջ հիմնավորման՝ չէ համապատասխանում սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկություններին:

Կիմերական և սկյութական արշավանքների ճանապարհների ուղղությունը որոշակի մասնանշված է Հերոդոտոսի մոտ, որի համապատասխան վկայությունները մեջ էմ բերում բառացի թարգմանությունը:

1. Հերոդ., գիրք I, գլուխ 103—104՝

«Երանք [սկյութացիները] ներս խուժեցին Ասիա, դուրս գտարևոյ Եփրոսյայից կիմերներին և հալածելով նրանց, որ փախում էին, և եկան արպիտով Մեդական երկիրը: Մետոխ լճից մինչև Փասիս դեպը և Կոզքիսը լավ զնացողի համար երեսուն օրվա ճանապարհ է, իսկ Կոզքիսից շատ չէ անցքը դեպի Մեդական երկիրը: Այդ երկու երկիրների միջև միայն մի ժողովուրդ է գտնվում՝ սասպեյրները, և, այստեղից ևս անցնելուց հետո, կարելի է հասնել Մեդական երկիրը: Սկյութացիները սակայն ներս խուժեցին ոչ լի այլ ճանապարհով, այլ, որովհետև ճանապարհից մոտորվել էին՝ ավելի վերև և ավելի երկար ճանապարհով, ունենալով իրենց այլ կողմում Կովկասյան լեռները»:

2. Նույնը, գիրք IV, գլուխ 12՝

1 Տե՛ս E. H. Minns, „The Scythians and Northern nomades“, Cambridge Ancient History, vol. III, գլուխ IX, Համեմատե նաև Լեո, Հայոց պատմություն, հատ. Ա., Թիֆլիս, 1917, էջ 309. Халатьянц, Очерк истории Армении, Москва, 1910, էջ 70 և ուրիշ.:

«Պարզ է, որ սկյութացիները, որոնք նրանց հալածելույ ներս էին խոստել Մեղազիան երկիրը՝ մուրթով էին ճանապարհից: Որովհետև կիմֆերները շարունակ փակաշնչիս են եղել ճովի երկայնությամբ, իսկ սկյութացիները նրանց հալածել էին, ունենալով իրենց աջ կողմում Կովկասյան լեռները՝ մինչև որ մտել էին Մեղազիան երկիրը, ուղղվելով ճանապարհից դեպի ներս»:

Հերոդոտոսի այս վկայությունները, որոնց հիմք է ծառայել հունական ավանդությունը, որոշ կետերում կարող են, իհարկե, ասարկելի լինել: Ենթադրում են, օրինակ, որ սկյութացիները արշավել էին Առաջավոր Ասիա ո՛չ թե կիմֆերներին հալածելու նպատակով, այլ, ընդհակառակը, նրանք, դաշնակից լինելով կիմֆերներին՝ եկել էին միասին նվաճումների ու ավարառություն համար: Մեջ բերված վկայությունները, որ որոշ կետերում վիճելի են, խիստ կարևոր են սակայն այն տեսակետից, որ նրանց մեջ մտանանջված են կիմֆերական և սկյութական արշավանքների ճանապարհները: Հերոդոտոսի վկայություններից սրբոզ երևում է, որ Մեոտիսի (Ազովյան ծովի) կողմերից Անգրիովիկաս արշավելու համար բացի Դերբենտի մոտով անցնող երկար ճանապարհից, որով ներխոսել էին Մեղիա սկյութացիները, հույներին հայտնի է եղել նաև Մեոտիս-Կոդքիսյան ճանապարհը, որը նրանք, համարելով ավելի կարճ ու ավելի հարմար, ենթադրել են կիմֆերական արշավանքի ճանապարհը: Հունական ավանդություն այս կարևոր ցուցումը, ինչպես կանանք, հաստատում են ասորեստանյան հին ազբյուրները:

Մեոտիս-Կոդքիսյան հին ճանապարհի առաջնակարգ նշանակությունը հին Ժամանակներում, իմ կարծիքով, միանշա՞մայն անփոփոխ է: Այս ճանապարհի հարավային մասը Արտաշատից մինչև Ռիոն-Փասիս գետը և այնտեղից մինչև Մերաստոպոլիս՝ նկարագրված է Պեռնիդերյան քարտեզում: Իմ «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» աշխատության մեջ այդ դիժը մանրամասն լուսարանված է և նրա ուղիությունը ցույց է տրված այժմյան Աշտարակի, Կոնդարտազի, Ղանլիճայի ու Սոսպոլայի մոտով գեպի Կուրի գետանցքը, որը գտնվում էր այժմյան Ախալցխայի մոտ, ու այնուհետև Աբասթումանի և Ջեկատի լեռանցքի վրայով գեպի Ռիոն գետը և այնտեղից գեպի Մերաստոպոլիս—Դիոսկուրիա:

Հյուսիսային Գլիճը այս ճանապարհի՝ Դիոսկուրիասից մինչև Մեոտիս (Ազովյան ծովը), որ Պեխտինդերյան քարտեզում նկարագրված է՝ ճշտիվ՝ շարունակվել է, ինչպես այդ մասնացույց է արված Հերոդոտոսի վերոհիշյալ վկայության մեջ՝ Աև ծովի Երկայնությունը: Կայսրանները նշանակված են ևս թերթը (կամ ութերթը) դարի հեղինակ Անանուն Ռավեննացու աշխարհագրության մեջ¹, որը օգտվել էր հին աղբյուրներից: Իսկ Սարաբոնի մոտ ցույց են արված ճանապարհի թե առանձին մասերը և թե սարածությունները՝ յսկամ Պանտիկասյան քաղաքից (այժմյան Կերչ) մինչև Դիոսկուրիաս հետևյալ հաջորդականությամբ:

Պանտիկասյանից մինչև Կորոկոնդամե (այժմյան Խլեբալդանե)	70 ստադիոն.
Այնուպից մինչև Սինդերի ծովափը	180 ստադիոն.
Այնուպից մինչև Բոտոս (հավանորեն, Նովորոսիյսկի մոտ)	400 ստադիոն.
Կերկաների (Չերքեզների) ծովափը	850 ստադիոն.
Ախալների ծովափը	500 ստադիոն.
Հենիոխների ծովափը	1000 ստադիոն.
Պիտիուսից (այժմյան Պիցունդա) մինչև Դիոսկուրիաս	360 ստադիոն.

Ուրեմն՝ Պանտիկասյանից մինչև Դիոսկուրիաս՝ ընդհամենը 3360 ստադիոն²: Որ Կիմֆեթների ութերթը դարի արշավանքը պետք է ենթադրենք Կոդքեսի վրայով՝ այդ երևում է, բացի Հերոդոտոսի հեռաառևանգ վկայությունից, նաև ասորեստանյան աղբյուրների մի վկայությունից, որը ուղարկության է առնվել պատմադեմոսների կողմից:

Ասորեստանյան բեռնադիր արձանագրություններում հիշատակված է Ուրարտուի թագավոր Ռուսաս Ա-ի (730—714 մեր թվ. ա.) անհաջող կռիվը Gimirrai-ների դեմ, որի մասին Ասորեստանի թագավոր Սարգոնին (722—705 մեր թվ. ա.) տեղեկություններ էին հաղորդել նրա գործակալներն ու յրեսաները: Այս հաղորդագրություններից մեկում, որ ուղարկել էր

¹ *See* K. Miller. *Itineraria Romana*, Römische Reisewege an der Hand der Tabula Peutingeriana, Stuttgart, 1916, էջ 653:

² *Str.* XI, 2, 8 (494) և XI, 2, 14 (496). *See* նաև K. J. Neumann, *Strabons Landeskunde von Kaukasien*, Leipzig, 1883, *Jahrbücher für Classische Philologie*, 13-er supplementband, էջ 327—344:

Սարգսնին Աշուրբխուան, հիշատակված է կիմմերներէ բնակութեան տեղը և մ'առնանշված է, որ Ուրարտուի և Գամիրրայի միջև դառնում են Գուրիանի և Նազիու երկիրները:

Այս կարևոր վիպութիւնը, իմ կարծիքով, խարագեաները սիկա ևն մեկնել: Պիտրովսկին, օրինակ, որի մոտ մեջ է բերված վերոհիշյալ վիպութիւնը՝ ենթադրում է, որ կիմմերներէ երկիրը դառնել է այլ ժամանակ Կապպադովկիայի արևելյան մասում, և ընդունում է, ուրեմն, որ Աշուրբխուայի նամակի մեջ հիշատակված Գուրիանի և Նազիու երկիրները դառնել են նմանապես Կապպադովկիայի մոտ: Նույն Կարծիքն են հասնել Աշուրբխուայի մոտ մասնանշված «Գամիրրա»-յի տեղագրութեան մասին նաև Մեշանինովը և Ղափանցյանը³:

Ինձ թվում է սակայն, որ ուշագիւր կերպով քննութեան առնելով Գուրիանի երկրի տեղագրութեան խնդիրը, որը համապատասխանում է ինչպիսի արձանագրութիւններէ մեջ հիշատակված Կուրիանի երկրին, դժոխքը չէ համոզվել, որ ութերորդ դարի մերջին քառորդում (մեր թվ. ա.) կիմմերները, որոնք ղեռնու հասած ջնն եղել Փոքր Աթիա՝ դառնում էին ո՛չ թե Կապպադովկիայում, այլ Ուրարտուի հյուսիսարևմտային ծագրամասի կողմերում՝ Կողքիսի հարավ-արևելքում:

Խարագեաներ Մեշանինովը և Ղափանցյանը հենց իրենք պարզ կերպով ցույց են տվել, որ ուրարտական արձանագրութիւններէ մեջ հիշատակված Kuriani երկիրը դառնել է այժմյան Ղարս-Լենինականի կողմերում⁴: Շատ պարզ է, ուրեմն որ կիմմերներէ երկիրը, որն Ուրարտուի հյուսիս-արևմուտքում դառնում Guriani-Kuriani-ի թիկունքումն էր՝ ո՛չ թե Կապպադովկիայում պետք է լիներ, այլ Ուրարտուի հյուսիսում, համայնորեն այժմյան Ախալքալաք-Ախալցխայի մոտակա շրջաններում:

Որ մեր այս եղբակացութիւնը հիմնավոր է՝ այդ երևում է

1 Տես Ե. Բ. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944, էջ 295.

2 Նույնը, էջ 295:

3 Տես Կ. Կ. Мещанинов, Халдоведение, Баку, 1927, էջ 41. Ղափանցյան, Ուրարտուի պատմութիւնը, Երևան, 1940, էջ 200 - 202.

4 Տես Мещанинов, Халдоведение, էջ 23 և 32. Ղափանցյան, Ուրարտուի պատմութիւնը, էջ 181, 182, 185, 186 ևն.:

նաև Ստրաբոնի ուշադրալ մի վկայությունից, որի մաս նույնպես մատնացույց է արված, որ դուրանիացիները, որոնք, անշուշտ, Guriani-Kuriani երկրի բնակչությունն էին՝ չաղրել են «Արմենիայից վերին»:

«Պատմում են,— ասում է Ստրաբոնը,¹— որ այնխնները մի մասը բնակվում է Ուլտիայում, իսկ մյուս մասը Արմենիայից վերին՝ Արտսի ու Նիրարոսի հետևում (սրանք Տալլոսի մասերն են), որոնցից Արտսը մոտ է այն ճանապարհին, որ տանում է Բարթոի տաճարի մոտով Եկրատանա: Ասում են, որ նաև Թրակացիներից ոմանք, որ անխնություն են սարապարաներ, այսինքն՝ գլուխ կարողներ (νεφαλοδοτοι)² սաղրում էին Արմենիայից վերին և հարևան էին դուրանիացիներին (Γορδάνοι) և մեղացիներին: Գրանք զնազանաբար նա անասնձ լեռնախններ էին, գլուխ կարող և սկյութացիների նման զանա մորթաղերձող, և հենց այդ նշանակությունն ունի սարապարան»³:

Guriani-Kuriani երկրի սեղադրության մասին վերոհիշյալ մեր դեռողությունները պարզ ցույց են տալիս, որ ութերորդ դարի վերջերում կիսմերենները դեռևս դանդում էին Ջալախք դախտում կամ նրա հարևան հյուսիսարևմտյան շրջաններում, որոնց միջով անցնում էր Մեոսիս-Կուրբլայան հին ճանապարհը: Իսկ այս դատան ինքնին արդեն ուշադրալ մի նշան է, որ նրանք Անդրկովկաս էին եկել նույն այդ ճանապարհով:

Ասորեստանյան սղրյունները վկայություններից երևում է, որ կիսմերենների մի մասը մոտայուն կերպով հաստատվել էր Ու-

¹ Str. XI, 14, 14, (531):

² Քսենոփոնի վկայությամբ գլուխ կարողներ են եղել նաև խալյուրները: «Սրանք ունին,— ասում է նա,— սննդամաներ և սաղավարաններ ու զոռինների մոտ դաշույն՝ նման լակեդեմոնական կեռ փոքր զանակի, որով սպանում էին, ում որ կարողանում էին հաղթել, և, կարելով ու վերցնելով զլուինները՝ մեկնում էին» (Anabasis, IV, 7, 16):

³ Sarapara, որ քստ Ստրաբոնի նշանակում է «գլուխ կարող», Աղոնցը և Ղափանցյանը Թարգմանում են «կիսատ» կամ «թերի գլուխ ունեցող» և այդ բառն իր նշանակությամբ համապատասխան են համարում Ստրենացու մոտ հիշատակված (II, 87) Կամսարականների նախահայր «Կամսար» անվան, որն ըստ Ստրենացու «Կամսար» էր անվանվել «քոյրութիւն զաղաթանն» պակաս լինելու պատճառով. տես Адоны, Армения в эпоху Юстиниана, էջ 423, ծան. և Капаньян, Научные труды Ерев. Гос. Унив., т. XIV, 1940, էջ 373: Վերոհիշյալ ենթադրությունն ըստ իս մի պարզ թյուրիմացությունն է:

ըրարուելի կյուսիք—արևմուտքում: Ըստ Երևույթին, կիմմերները այս հասակածն է, որ հիշատակվում է որպես հարկատու Ուրարտական թագավորության, իսկ յոթերորդ դարում՝ իբրև դաշնակից Ռուսա Բ-ի (685—645 մեր թվ. ա.)¹:

Ուրարտական թագավորության թուլացման և քայքայման ժամանակ կիմմերները և նրանց հետ եկած սկյութական և թրակիական յաշնակից այլ ցեղերը, ըստ Երևույթին, նորաձևել էին դեպի հարավ և զբաղվել էին Շիրակը և Վանանդը: Սարարոնի թոս հիշատակված սարապարաները, հալանորեն, այդ ցեղերից մեկն էին: Նույն այս կողմերումն էին ապրում, ինչպես վկայում է Պլինիուսը, նաև սակասանները, որոնք սակեր կամ սկյութացիներ էին և զաղթել էին այստեղ կիմմերների հետ միասին:

«Թասիելի [հալանորեն, Տաշիր] և Տրխարի [համաճորեն, Տրխալեա] երկիրը, — ստում է Պլինիուսը, — սարածվում էր մինչև Պարիզոսյան լեռները. սրանց վերևում էին կոչքիսի սամայի տեղերը, սրանց կոչքին, կերպիսյան լեռների գլխաց, ապրում են արմենոխալսուցները: Մոսիերի երկիրները ձգվում են մինչև Իբեր գետը, որը թափվում է Կուր գետի մեջ, իսկ սրանց տակն ին սակասանները [Sacassani] և այդ մակրոնները մինչև Ապարուս գետը»²:

Պլինիուսի այս վկայությունը պատմագետները, իմ կարծիքով, ճիշտ չեն հասկացել: Նրանք կարծել են, որ այս սակասանները Սարարոնի հիշատակած սակերն են³, որոնք ապրում էին Ուտիքի Ծակաշեն գոյություն և Արբիանոսի «Աղեքոսանդրի արչավանք» երկում նանվանված ևն սակեսիներ (Σαχασίαι, III, S, 4 և II, 4)⁴: Այս խնդիրը ստանում է Կրոյրթովին նոր լուսաբանություն:

Պարզվում է որոշակի, որ «սակասան»-ները կամ «սակեսիներ»-ները Անդրկովկաս էին մտել երկու ուղղությամբ և բնակություն էին այստեղ հաստատել ո՛չ միայն Ծակաշենում,

1 *Տես* Пустровский, Урартское государство во второй половине VIII в. до Н. Э., Вестник древней истории, 1939, № 1, էջ 70. Мещанинов, Халдоведение, էջ 51. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, էջ 213:

2 *Plin*, Nat. Hist., VI, 11, 1, (հրատ. Littre-ի):

3 *Str.* XI, 8, 4 (511):

4 *Տես* Markwart, Eranschahr, էջ 121, ծան. և Адоныч, Армения в эпоху Юстиниана, էջ 121, ծան. 2:

այլև Կարս-Լենինականի շրջանում: Սակերի կամ սկյութացի-
ների մի խումբը եկել էր Անդրկովկաս կիմֆերների հետ միասին
Մեոտիս-Կողքիսյան ճանապարհով ութերորդ դարում մեր թվա-
կանությունից առաջ, իսկ մյուս խումբը՝ Դերբենտի վրայով,
հալանորեն, ետթերորդ դարում (մեր թվ. ա.):

Նույնը պետք է ասել նաև այնիանների մասին: Ըստ երե-
վույթի, սրանք ևս եկել էին հարավ կիմֆերական և սկյութա-
կան արշավանքների ժամանակ 8—7-րդ դարերում մեր թվաբա-
նությունից առաջ Մեոտիս-կողքիսյան և Գերբենտի ճանապարհ-
ներով: Սրանց մի մասը բնակութուն էր հաստատել Ուտիքում,
մի մասը՝ Շիրակում, իսկ մի մասն էլ կիմֆերների մի ստվար
հաստի մի հետ անցնել էր Ուրարտուի միջով Փոքր Հայքի կող-
մերը և հաստատվել էր այստեղ Գարանադիում՝ Անի-Կամսիի
շրջանում: Ինչպես շատ ճիշտ նկատել է Ադոնցը, Անի ստորոցը
Շիրակում և Անի-Կամսիսը Գարանադիում և Հանին Փայտակա-
րանում կոչվել են այդպես այնիան ցեղի անունով²:

2. ՔՍԵՆՈՓՈՆՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՍԿՅՈՒԹԵՆՆԵՐԻ ՄԻՋՈՎ ԵՎ ԱՐԲԱՋՈՍ ԳԵՏԻ ՈՒ ԳՅՈՒՄՆԻԱՍ ՔԱՂԱՔԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեր նոր եզրակացությունը Շիրակ-Վանանդում նախատրվե-
նական ժամանակներում հաստատված կիմֆերական-սկյութական
դաշտականության մասին ո՛չ միայն սրբազում է Հին Հայաստա-
նի ազգագրության հետաքրքիր խնդիրներից մեկը, այլև անա-
կրեկալ կերպով նոր լույս է սփռում Քսենոփոնի ու Տասը հա-
զարի նահանջի ճանապարհի վիճելի խնդրի վրա, որը, չնայած
բազմաթիվ ուսումնասիրությունների, մնացել է դեռևս մութ
ու անորոշ:

Ըստ Քսենոփոնի՝ նահանջող հելլեն գորքը Տասքների երկ-
րից (Տասքից) մտել էր խայտերների երկիրը և, կովեչով սրանց

¹ Strabo, XI 14, 14 (531):

² Տես Աճօռ, Армения в эпоху Юстиниана, էջ 56—57 և 420, Համե-
մատե նաև Andreas-ի համապատասխան ենթադրությունը Փայտակարա-
նում գտնվող Հանիի անվան մասին, տես Pauly—Wiss. Real-Encyclopedie
(Ainiana):

հետ, ետեւ օրվա ընթացքում անցել էր 50 փարսախ և եկել էր մինչև Հարբաղոս գետը. իսկ այդտեղից դնացել էր սկյութներին երկրի միջով 8 օրվա ընթացքում 40 փարսախ և հասել էր Գյումրիս քաղաքը:

Քսենոփոնի համադրատասխան վկայութունը, որ վերաբերվում է սկյութներին երկրին՝ թարգմանաբար մեջ եմ բերում նամողջությամբ:

Քսենոփոն, Անաբազիս, գիրք IV, գլ. 7. 18—21 և գլ. 8, 1—2՝

«Այնտեղից [Խալյուրների երկրից] հեղեղները հեան դեպի Հարբաղոս գետը, որի լայնությունն էր չորս ուղեթրոն: Այնուհետև նրանք դնացին սկյութներին միջով չորս օրվա ճանապարհ, քսան փարսախ, դաշտի միջով դեպի գյուղերը, որոնց մեջ մնացին երեք օր և Իրենց համար մթերեցին կենսամթերքներ: Հետո անցան չորս օրվա ճանապարհ, քսան փարսախ, դեպի մեծ, Չարուսա և բարձրամարդ մի քաղաք, որն անուանվում էր Գյումրիս: Այս քաղաքից երկրի խլիանափորը ուղարկեց հեղեղներին մի ուղեցույց, որպեսզի նրանց ուղեկցե հարևան երկրի միջով, որն Իրենց թշնամի էր: Երբ ուղեցույցը եկավ՝ տասը օր նրանց կառաջնորդե հինգ օրվա ընթացքում մի տեղ, որտեղից նրանք կտեսնեն ծովը. և հայտնեց, որ եթե չտեսնեն՝ թող Իրեն մահվան դատապարտեն: Մա առաջնորդեց նրանց և, երբ ներս մտան Իրենց թշնամիների երկիրը՝ հորդորեց հույներին, որ այրեն ու սննդացնեն երկիրը: Այսպիսով հայտնի եղավ, որ նա միասին եկել էր ո՛չ թե հեղեղներին բարյացակամություն անելու, այլ հենց զրա համար: Եվ նրանք հասան լեռը՝ հինգերորդ օրը, իսկ լեռան անունն էր Թեքես: Երբ ամառվիները լեռան վրա էին՝ մեծ աղմուկ բարձրացավ»... [հեղեղները տեսել էին այդտեղից ծովը և ուրախացել էին]:

Այնտեղից հեղեղները դնացին մահրոնների միջով երեք օրվա ճանապարհ՝ տասը փարսախ: Հենց առաջին օրը նրանք հասան այն գետի մոտ, որն Իրարից բաժանում էր մահրոնների և սկյութների երկիրները: Հեղեղները աջ կողմից վերև դանվում էր ամբարցրած մի վայր, որը խիստ զփայրամաստ էլի էր, իսկ ձախ կողմում՝ ուրիշ մի գետ,

որի մեջ թափվում էր բաժանող զեաը և որը հարկավոր էր
«անցնել»:

Մեջ բերված այս վիպուկությունների հսկայական սկյութեն-
ներին հարեան ևն եղել արեմուտքում մակրոնները: Պլինիոսը
ևս, ինչպես վերև տեսանք, վիպում է, որ սակասանների կող-
քին, որոնք, առարակույս, նույն այս սկյութեններն են՝ ապ-
րում էին «մակրոնները մինչև Ապսարոս զեաը», այսինքն՝
այժմյան Ճորտլը:

Այս երկու վիպուկություններից, որ հաստատում են դարձյալ
կիմերական-սկյութական ցեղերի բնակության նվազելի մասին
վերոհիշյալ մեր եզրակացությունը՝ շատ պարզ երևում է, որ
Տասը հազարի նահանջի ժամանակ (401—400 մեր թվ ա․)
սկյութենները գտնվում էին ո՛չ թե «Կուր-Հարրազոս» գետի ա-
փազանում այժմյան Տիգրիսից զեպի չարեմուտք և արևելք-
ինչպես այդ ենթադրում է Խուրթազովը¹, այլ այժմյան Կարա-
լենիականի շրջաններում²:

Արդ՝ երկրես բնութանկյով մեր այս նոր ու կարևոր եզրա-
կացությունը՝ կարող ենք նաև հաստատուն կերպով ենթադրել,
որ «Քսենոփոնի վիպուկյան մեջ հիշատակված Հարրազոս զե-
աը և Գլուսնիսա քաղաքը գտնվում էին նույնպես սկյութեններին
վերև մատնանշված երկրում:

Բանասերները, որ մանրամասն ուսումնասիրել են հույն
ցորբի նահանջի ճանապարհը, Հարրազոս զեաը ("Αρραζος) նույ
նացրել են կամ Ճորտլ զեաի, կամ Արևմտյան Արփաշայի և
կամ Կուր գետի հետ: Մեր նոր լուսարանությունը՝ Քսենոփոն-
յան ճանապարհը զեպի Հարրազոս զեաը և նրա դաշտային մա-
սում գտնվող կյուղերը որոշվում է նոր ուղղությունը՝ զեպի
Արաքս-Արազ գետը և Արարատյան դաշտը:

Իմ նախկին ենթադրությունը, որ հույները Եփրատը նրա
սկունքների մոտ անցնելուց հետո Բագայան-Դիադինի շրջանից
Եկել էին Կարվանսարայի կամ Կուջախի լեռնանցքով զեպի Փա-

¹ В. Н. Худяков, Отступление 10.000 греков, Исторические записки, I, Москва, 1937, էջ 123, և նույնի, Опыт этнографии Кавказа, Известия Госуд. Рус. Геогр. Общества, том. LXII, вып. 4, 1930, էջ 424.

² Հ. Կիպերթը իր կազմած պատմական բարեկրում սկյութենների բնակության տեղը ցույց է տվել հին Դերջան զապառի հյուսիսակողմում, որ ճիշտ է. տես H. Kiepert, Atlas antiquus, tab. IV.

սիւ-Արաքալ թվում է ինձ այժմ անհավանական: Քսենոփոնը, ըստ երևույթին, Փասիս է անվանել Բասենում գտնվող Արաքսի վերին հոսանքը՝ այժմյան Պասինսուն: Իսկ ըստ Արաքս-Արազը, որին հույները հասել էին Արարատյան դաշտի արևմտակողմում կամ կաղզվանի շրջանում՝ Քսենոփոնի մոտ անվանված է՝ Հարրադոս (*Ἀρραδοσ*), որի սկզբնական ընթերցվածը Վարսդ էր սեղած լինել *Ἀραδοσ*:

"*Ἀρραδοσ*-ի առաջացումը" *Ἀραδοσ*-ից ակղանունների աղավաղման սովորական ձև է: Թուրքերը, օրինակ, հայկական Օձունը աղավաղել են և ժողովրդական ստուգաբանությունը դարձրել են Ուղունըր (*«ուղուն»* նշանակում է երկար): Նամնապես և արմենները խաղաղան ժամանակաշրջանի Velikuxi երկրի անունը խաստափորել են և դարձրել Գեղարքունի, իսկ Stranguria, Strangira տեղանունը՝ Աշտարակ: Նույնը արել են և հույները՝ *Ἀρραδοσ* պարզապես Արազ գետի անվան աղճատված ձևն է, որ առաջացել է ժողովրդական ստուգաբանությունը (*հուն: ἀρράδω* նշանակում է «հափշտակել»):

Հարբազոսի խոյնությունը Քսենոփոնի վերահիշյալ վկայությունն անջ ցույց է տրված 4 պլեթրոն, 'այսինքն' մոտ 120 մետր: Միանգամայն հնարավոր է ըստ իս և հայանական, որ Արաքսը, որը մեծ գետ է, Արարատյան դաշտում կարող էր ունեցած լինել այդ լայնությունը: Մակաչն այդ դժվար է այժմ ստուգել, որովհետև Քսենոփոնի ու հույն գորքի նահանջից հետո Արաքսը իր ընթացքը փոխել է³:

Հարբազոսի նույնացումը Արաքս գետի հետ հնարավորություն է տալիս մեզ սրուելու նաև Գյումնիաս քաղաքի տեղագրությունը:

Սկյութենական 'երկրի' գյուղերից, որոնք գտնվում էին Արարատյան դաշտում, ինչպես վկայում է Քսենոփոնը, հույները անցել էին չորս օրվա ճանապարհ, քսան փարսախ (մոտ 100 կիլոմետր) և հասել էին «մեծ, հարուստ և բազմամարդ» մի քաղաքի մոտ, որն անվանվում էր Գյումնիաս: Ինձ թվում է, որ նահանջող գորքի այս ճանապարհը պետք է ենթադրել Արարատյան դաշտից դեպի Շիրակ, իսկ Գյումնիաս քաղաքը հու-

1 Տես «Էին Հայաստանի գլխավոր ճանապարհները», էջ 37—40:

2 Տես 2. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 1, Երևան, 1940, էջ 188:

3 Տես «Մովսեսի ետեհացում, Պատմություն Հայոց», 11, 1թ.:

մածայն Բսենտիոնի ցույց տրված փարածուխյան պետք է լինի
հին Կուսմայրին, այժմյան Լենինական-Գյումրին: Բսենտիոնի
մոտ այդ քաղաքի Դոբրուչ անունը պարզապես Կուսմայր-Գյում-
րի է հին անվան աղավաղությունն է, որ առաջացել է, ինչպես
և վերահիշյալ "Αρπυζος աղճատումը, ժողովրդական ստուգա-
րանությունը (հուն. γυμνος բառը նշանակում է «մերկ»):

Դոբրուչ-ի ուղիղ ընթերցումը պետք է լինի, հավանորեն Դոբրուչ:

Հարբադուսի և Գյումրիխասի տեղագրություն և անունների
նոր լուսարանությունը, որ ինձ առիթ է քան հատկանական և թը-
վում, ինչպես ամերիամասն ցույց է տալու Բսենտիոնյան ճա-
նապարհի լուսարանությունը նվիրված իմ ընդարձակ ուսումնա-
սիրություն մեջ՝ նահանջող հույն գործի ճանապարհը սրբվում
է առիթի հաստատուն ու հիմնավոր կերպով, քան այդ արված
է աշխարհագրական նախորդ ուսումնասիրություններում:

3. ԿՈՂՔԻՍՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱԿԵՏՆ Է ԵՂԵԼ ՆԱՀԱՆՁՈՂ ՀՈՒՅՆԵՐԻ

Տասը հազար հույների նահանջի ճանապարհի հետադրու-
թյանը նվիրված ուսումնասիրություններն ունեն հիմնական մի
թերություն: Եվրոպական պատմագետները և աշխարհագիրնե-
րը, որոնք գրառվել են այս խնդրով՝ մեծ մասամբ, աղոտ դա-
դախար են ունեցել Հին Հայաստանի պատմական աշխարհադը-
րություն մասին և բավարար չափով ծանոթ չեն եղել Հայաս-
տանի հին ճանապարհներին և, մաքնապարապես, ուղղակի
այն ճանապարհագրի, որը Հայաստանի և Կողքիսի վրայով
իջնում էր Սև ծովի արևելյան նավահանգիստները:

Այդ ճանապարհները ուսումնասիրված են և լուսարանված
միայն վերջերս իմ և Մարկիլարտի աշխատություններում:

Եվրոպական պատմագետների մեծագույն մասը թյուրիմա-
ցարար ենթադրել են, որ Բսենտիոնի ժամանակ Հայաստանից
Սև ծովի ափերը դուրս գալու համար հարմարագույն ճանա-
պարհն էր կարավանային մեծ ուղին, որը Բարձր Հայքից գնում
էր Տրապիզոն այժմյան Պայուրթի (Բարբերդի) վրայով: Այդ
նրանց հիմնական սխալն է: Էրզրում-Տրապիզոն ճանապարհը,

10-252
A 33756



ինչպես մատնացույց են արել Կյուսմոն եղբայրները¹, անցկացված է եղել Պոնտոսյան լեռնակույտի միջով հոմեական արքայետուժյան շրջանում և, ըստ երևույթին, զոյուլթյուն չէ ունեցել, չին ժամանակներում: Եվրոպական գիտնականները նկատի չեն ունեցել, բացի այդ, որ Քսենոփոնի ժամանակ Հայաստանից Մե ծովի ավազանը դուրս դալու համար ամենահարմար ու սպառնով ճանապարհն էր ոչ թե այժմյան էրզրում-Տրապիզոն, այլ չին Մեոտիս-Կոդքիսյան ճանապարհը, որը, հավանորեն, հայտնի էր նահանջող հույներին Հերոդոտոսի և այլ հեղինակների երկերից: Եվ չենց սկզբից եևթ, ինչպես մանրամասն ցույց եմ տալու «Քսենոփոնյան ճանապարհը» իմ ընդարձակ ուսումնասիրության մեջ, հույներն աշխատել էին մտնել ո՛չ թե Բարձր Հայք կամ Բասեն, ինչպես սովորաբար ենթադրում են, այլ Արարատյան դաշտ և Շիրակ, ուր դանվում էր Մեոտիս-Կոդքիսյան ճանապարհի հարավային գիծը:

Ըստ Քսենոփոնի՝ նահանջող հեղին գորքը մտել էր Արմենիա, անցնելով Կենտրիտես գետը (այժմյան Բոհաման-սուն): Այստեղից նրանք գնացել էին վեց օրվա ճանապարհ, 30 փարսախ (մոտ 150—180 կիլոմետր), և Տալրոսյան լեռներով իջել էին Մչո գաշտը ու հասել մինչև Տելերոսս կամ Մեղ գետը: Ծարունակելով ճանապարհը Տելերոսս գետի մոտից՝ նրանք անցել էին քարձյալ վեց օրվա ճանապարհ, 30 փարսախ (մոտ 150—180 կիլոմետր), և հասել էին Եփրատ նրա ակունքներին մոտ և անցել էին այդ գետը, թրջվելով մինչև պորտ:

Այս Եփրատ գետը, ինչպես միանդամայն ճիշտ ենթադրեց են գիտնականների մեծագույն մասը, Արևելյան Եփրատն է՝ չին Արածանին: Գիտնականների մի մասի կարծիքով, հույները, անցնելով Եփրատ-Արածանին Մանգկերտի մոտ, ուղղվել էին դեպի Բարձր Հայք, իսկ մյուս մասի կարծիքով՝ նրանք, անցնելով Եփրատ Արածանին Դարաբիլիսեի մոտ՝ դուրս էին եկել Ալաշկերտի դաշտը:

Իմ «Չին Հայաստանի ճանապարհները» աշխատութան մեջ (էջ 38) ևս ավելի հավանական էի համարել, որ նահանջող գորքը, որը եկել էր Պելոպոնեզիան քարտեզում նշված Տիգրանակերտ-Բագալանս ուղղման ճանապարհով, Եփրատ-Արածանին անցնելուց հետո՝ մտել էր ո՛չ թե Ալաշկերտի, այլ Դիա-

1 Cymont Fr. et Cumont Eug., Studia Pontica, II, Bruxelles, 1906, § 34:

դին-Յազազյանի դաշտը: Հուլիսերի ճանապարհի այս ուղղու-
թյունը ինձ այժմ հիմք է ստալիս ենթադրելու, որ նրանց նպա-
տակն է եղել զնալ այստեղից Արարատյան դաշտ և դուրս դաշ-
տով ոսղմական ու սուևարական Կողբխոյան ճանապարհով՝ այժ-
մյան Լենինական-Գյումրիի, Ախալքալաքի և Ախալցխայի վը-
րայով:

Դիաղին-Յազազյանի շրջանում հուլիսերն իջևանեցին արմե-
ների գյուղերում և հանդստանալուց հետո ճանապարհը շարու-
նակեցին, իրենց ուղեցույց վերցնելով ձերբակալված գյուղա-
պետին: Մակայն գյուղապետը այստեղից նրանց տարավ ո՛չ թե
դեպի հյուսիս, ուր, ըստ երևույթին, կախին արմենական դյու-
ղեր, այլ ամայի տեղերով դեպի արևմուտք:

Նրանց երկար ու ոլորադուլտ ճանապարհը, որ մինչև
այժմ բախնորար շարիով լուսարանված է՝ կարելի է ենթադրել,
ամենայն հավանականությամբ, հետոյալ ուղղությամբ, — Ա-
րաշիերսի դաշտի և Դելիբաբայի վրայով դեպի Արնազ կամ Պա-
սին-սու գետը, որը Քսենոփոնի մոտ անվանված է Փասիս, այս-
տեղից դեպի Օլթիի շրջանը, ուր դանդում էր Տաոնների երկի-
րը, և այնուհետև Սարիգամիշի շրջանով և Կարսի հարավակող-
մով դեպի Կաղզկանի կողմերը և Արագ-Հարբազոս գետը:

Իջևելով Կաղզկանի շրջանից Արարատյան դաշտ՝ հուլիսերն
արդեն դուրս էին եկել, երկար թափառումներից հետո, այն
ոսղմական մեծ ճանապարհը, որը Մեոսիս-Կողբխոյան ճանա-
պարհի հարավային ճյուղն էր: Բայց այստեղ, Գյումրիա-
Գյումրիի մոտ, նրանք փոխանակ զնալու հյուսիս շուռ եկան
նորից դեպի արևմուտք: Ըստ երևույթին, սկսութենների իշ-
խանավորը, ևս, ինչպես և արմենների գյուղապետը, ուղեցել
էր իր երկիրը աղատել այս վտանգավոր հյուսիսից: Նա ուղար-
կեց նրանց մի ուղեցույց, որը խոստացավ ամենակարճ ժամա-
նակում տանել նրանց մի լեռ, Վրաստանից նրանք կտեսնեն ծովը,

Նահանջող զորքի ճանապարհը Գյումրիա-Գյումրիի մոտից
մինչև Տրապիզոն որոշվում է միանգամայն բավարար ճշտու-
թյամբ: Քսենոփոնի պատմելով Գյումրիասի մոտից հուլիսերը
զնացել էին ուղեցույցի առաջնորդությամբ հինգ օրվա ճանա-
պարհ (մոտ 125—150 կիլոմետր) և հասել Թեքես լեռը: Այստե-
ղից նրանք զնացել էին երեք օրվա ճանապարհ, ստսը փարսախ
(մոտ 50—60 կիլոմետր) մակրոնների Վրկրի միջով և հասել
կոլխերի գյուղերը, և այստեղ ևս ինչպես և արևմուտքից օրվա

ընթացքում եւթը փարսախ (մոտ 35—42 կերամետր) և հասել էին Տրապիզոն քաղաքը:

Հուլյները նահանջել այս ճանապարհամասը մեր նոր լուսաբանությամբ որոշվում է Լենինական-Գյումրիի մոտից Չարիշատի շրջանի միջով և Արդահանի հարվակողմով դեպի Ճորոխ գետը և այնտեղից դժփարանցանելի լեռնային տեղերով դեպի Տրապիզոն:

4. ԳՅՈՒՄՆԻԱՍ-ԳՅՈՒՄՐԻՆ ԻԲՐԵՎ ԿԻՄՄԵՐԱԿԱՆ-ՍԿՅՈՒԹԱԿԱՆ ՑԵՂԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Բաննովունի հիշատակած Գյումնիաս քաղաքի նույնացումը Կումալյրի-Գյումրիի հետ սրբազում է Հայաստանի պատմական աշխարհագրության մութ ու հետաքրքիր խնդիրներից մեկը և անակնկալ նոր լույս է սփռում Հին Հայաստանի հյուսիս-արևմտյան շրջանների պատմական անցյալի վրա:

Գյումնիաս-Գյումրիի անունը, որը, հավանորեն, կենտրոնն է եղել Շիրակ-Վանանդ-Այրարատում գտնվող կիմմերական սկյութական ցեղերի միության՝ ծագել է, ըստ Ներսիսյանի, կիմմերների Gimirrai անունից: Այս ենթադրությունը մոտ քառասուն տարի առաջ արել է Եռակիմովը¹: Բայց նա կարծել է սխալմամբ, որ Հերոդոտոսի վկայություներ «Կիմմերիա»-յի մասին, որը գտնվում էր Արաքսի մոտ Անդրկասպյան երկրում, վերաբերվում է Շիրակում գտնվող Արաքսին:

Եռակիմովի հողիվածում հետաքրքիր են Գյումրիի մասին նրա հաղորդած այն տեղեկությունները, որ նա լսել էր տեղական բնակիչներից: Նրա ասելով՝ ամբողջ Լենինական-Գյումրի նոր քաղաքը շինված է հնագործան դերեզմանոցի վրա, որի մեջ, ինչպես իրեն պատմել են, եղել են բրոնզե նետեր, այլ իրեր և երկարազլուխ գանգեր:

Որ Կումալյրի-Գյումրին հնադարյան տեսակետից, իրոք, խիստ հետաքրքիր վայր է՝ այդ վերջերս սրբազանցին 1934 թվին

¹ См. А. Я. Иоакимов, Палео-географические заметки о бывшем селении Гюмри. Изв. Кавк. Отд. Рус. Геогр. общ., т. XV, 1902, էջ 1—7.

այնուեղ կատարված պեղումները: Պեղումները վայրում, Լենինականի մասի կամբինատի մոտերքում, դեռնի ուղի մեծ տարածութեան վրայ գտել էին մի հին շինատեղի ու նաև մի հին դամբարան: Պեղումները արդյունքը համառոտ կերպով հրատարակված է «Проблемы Истории» ամսագրում¹:

«Յնակարանները, — սուտ է հողվածադիրը, — քառանկյունի կիսադեղնաձև շինքեր են, որ ունեն պատեր՝ շինված հասարակ խոշոր քարերից: Նրանց ճամկերը եղել են, հայտնուրեն, փայտից և փայտե սյուների վրա, որոնցից պահպանվել են քարե պարզ հիմքերը: Թաղումները երկու տիպի են — դեռնի մեջ կամ արկղաձև՝ շինված սալաքարերից: Կմախքներն ամեն տեղ պլուզված դուռթյամբ են, ուղղութեամբ հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևմուտք: Թաղումներ պատահում են անհասակաճ և խճուղի: Թաղումներում և բնակարաններում գտնված են քարե զործիքներ (նոթաքարյան), բազմատեսակ խեցեղեն իրեր (դասելով նրանց մնացորդները կտորտանքներից), իրեր սկրիպի, նաև բրոնզե իրեր: Բանվորների ասելով՝ նրանք հանել են մի ինչոր երկաթե իր (սրի երախակալ ?), բայց, դժբախտաբար, այդ իրը մենք չկարողացանք ձարել: Իրերը դեռնիքը թե թաղումների մեջ և թե բնակարաններում ըստ նյութի, ախլի և տեխնիկայի միատեսակ են:

Բոլոր այդ նյութերը, ինչպես և բնակարանները շինարարութեան վերաբերմամբ մեր պարզ նկատած երկու ըստ ժամանակի տարբեր շերտերը, ապացույց են ծառայում շինատեղու երկար գոյութեան: Այդ գորաչքմանը, ի նկատի ունենալով նյութական արտադրութեանը՝ կարելի է ենթադրել ոչ վաղ, քան սուսջին հաղարամյակը մեր թվականութեանից առաջ: Շինատեղին պատկանում է Հայաստանի նախնական բնակչութեանը, որի կենցաղը եղել է սոսմային և որը ենթարկվել է խայր-ուրարտացիների հարձակմանը սուսջին հաղարամյակի սկզբում մեր թվականութեանից առաջ:

Տվյալ հասարակութեան և, ընդհանրապես, Հայաստանի հնադուրյն անցյալի արտադրողական ուժերի զարգացման

¹ Տես A. A. Калантар, Открытие дохалдского поселения близ Пелинакана, Проблемы истории, 1934, № 9—10, էջ 167—168:

մակարդակը բնորոշելու համար այս շինատեղում արված
դյուռոք, որ Հայաստանում առաջին անգամն է նկատվում՝
ունի բացառիկ նշանակություն: Այդ քարե կաղապարն է,
որով ձուլել են պրոնդե կացիններ (դանված է կաղապարի
կեսը), ու նաև դանված իրի տեղում պեղված շենքն է, որը
արհեստանոց— հալոցարան է: Նրա մեջ մոխիրի հաստ շեր-
տով հնոցը ուներ կենտրոնական դիրք, իսկ հնոցի մոտ
կար խարամի կույտ: Այնտեղ դանված են նաև կալվե աման
ներ ներսում միջակաղապարներով, որ, ըստ երևույթին,
գործիքներ են ձուլվածքի կամ թրծվածքի համար:

Արհեստանոցի և ձուլվածքի համար քարե կաղապարի
հայտարերման փաստը անհերքելի մի ազդացույց է, որ
Հայաստանի նախնական բնակչույթյունը (аборигены) ծա-
նոթ է եղել պղնձի և բրոնզի մշակման և, մասնավորապես,
նաև ցույց է տալիս, որ բրոնզե կացինները տեղական ար-
տադրույթյուն են,— մի հանգամանք, որ դիտույթյան մեջ
հաստատագրվում է առաջին անգամ»:

Ինձ թվում է, որ Հայաստանում հաստատված կլիմերա-
կան-սկյուլթական ցեղերի և, հատկապես, նաև նրանց Գյում-
նիաս-Գյումրի մեծ քաղաքի մասին լսմանը ուսումնասիրու-
թյան նոր տվյալները հնագետներին հարկադրելու են վերաբեր-
նույթյան ենթարկելու իրենց ենթադրույթյունների զգալի մի
մասը, որ վերաբերվում են Հայաստանի նախնական նախախա-
ղական բնակչույթյան կուլտուրային: Հայաստանի պատմական
և կուլտուրական դարգացումը շատ ավելի բարդ և բաղմապան է,
քան սովորաբար ենթադրվում է:

Իմ կարծիքով, դժվար է հաստատապես և անվերապահորեն
պնդել, որ Լենինականում 1934 թվին դանված շինատեղը,
թաղումները և իրերը նախախաղական են և վերադրվելու են
առաջին հազարամյակի սկզբներին մեր թվականությունից ա-
ռաջ: Միանգամայն հնարավոր է և անվամ հավանական, որ
այդ հնույթյունների մի մասը հետուրարտյան են և կարող են
վերագրվել այն ավելի ուշ դարաշրջանին, երբ Շիրակում իշխել
են կիմմերական-սկյուլթական ու նաև սարմատական ցեղեր:
Ներքև ես ցույց եմ տալու, որ չորրորդ կամ երրորդ դարում
մեր թվականությունից առաջ նույն այս շրջաններում բնակչու-
յթյուն էին հաստատել հյուսիսային Կովկասից եկած շիրակները,
որոնք ապրմատակրան կամ շարայան ցեղ էին:

Կիմմերական-սելյութական ժողովուրդները իջևանության շրջությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիսում խիստ կարե-վոր մի փաստ է, որ արժանի է ո՛չ միայն պատմագետների, այլև հնագետների հատուկ ուշադրության: Պատմագետների շորձը, ինչպես տեսնում ենք, բախական բարդանում է: Կիմմերները, սելյութացիները և սարմատները կուլտուրայի, լեզվի և անցյալի պրոբլեմը և՛ այդ պրոբլեմի լուսարանումը նշանա-կություն են ստանում այժմ և՛ մեզ համար:

Եվրոպական դեմոնականների մեծազույն մասը կիմմերներին և սելյութացիներին համարում են իրար ազգակից և՛ վերազրու-մ են նրանց իրանական ծագում: Սակայն այժմ ամօլիք հավանա-կան է համարվում, որ սելյութացիներ են անօլանյեղ Ռուսաս-տանի առփաստաններում ապրող ո՛չ միայն իրանական, այլև ոչ-իրանական ժողովուրդները: Ակադ. Մալը, հիմնվելով լեզ-վադիտական իր նոր դիտողությունների վրա՝ մատնանշել է վերջերս սելյութական Ժողովուրդների կապը հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի հարեթական ժողովուրդների հետ:

Հատկապես կիմմերների վերաբերմամբ ուսս դեմոնական Ռուսոտոլցեվը արժանաչեր է կարծելու, որ նրանք մոտ ազգակից են թրակացիներին և, հավանորեն, հատուկ մի ճյուղ են արար-ողյան կան հարեթական ցեղի: Նրանց դերեզմանաթեմների պեղումները վկայում են, որ կիմմերները գտնվել են կուլտու-րական զարգացման բախական բարձր աստիճանի վրա: Եվ այդ հաստատվում է, իրապես, նաև Քսենոփոնի վերոհիշյալ վկայու-թյամբ, որի մեջ հիշատակված է կիմմերական «մեծ, հարուստ և բազմամարդ» Գյումնիաս-Գյումրի քաղաքը Շիրակում:

Կիմմերական-սելյութական ցեղերի ծագման և ազգակցու-թյան խնդիրը, ինչպես տեսնում ենք, դեռ վերջնականապես պարզված չէ: Կարելի է սակայն հավանական համարել միայն այն, որ կիմմերական և սելյութական ժողովուրդները գտնվել են մեծ չափով իրանական կուլտուրայի ազդեցության տակ և նրանց մի մասը խոսել է իրանական խմբի լեզուներով:

Մարկիարտն իր վերջին աշխատություններից մեկում² դար-ժանայի է համարում, որ Անդրկովկասի հյուսիսային-արևմտյան շրջաններում տեղաբնական անուններից շատերը, ինչպես օրի-

¹ Տես Մ. Ի. Ростовцев, Эллинизмо и иранство на юге России, Пе-троград, 1918, էջ 26—32.

² Տես „Südarmenien und die Tigrisquellen“, Wien, 1930, էջ 15 ևն.

նակ՝ Պարիազրեն-Պարաքոսթրաս (այժմյան Պարիազրան լեռնաշղթան), Արաքս, Հրազդան և ուրիշ շատերը, Երանական են: Այս տեղանունների մի մասը, որ, իրապես, իրանական են, ինչպես պարզվում է այժմ մեր այս ուսումնասիրությունից, կարող են առաջացած լինել հեռու-ուրաքայան այն ժամանակաշրջանում, երբ այստեղ իշխում էին կիմերական-սկյութական ցեղերը, որոնք Բանուփոնի մոտ անվանված են սկյութիներ:

Առանձնապես կարևոր է, հատկապես, և այն, որ մեր նոր դիտողություններից որոշակի հետևում է, որ հույները նախանջից առաջ (401-400 մեր թվ. առաջ) կիմերական-սկյութական ցեղերը օրհնապես են եղել բացի Կարս-Լենինականի շրջաններից նաև Արարատյան դաշտին:

Այս նոր ու կարևոր հետևությունը, որն ունի բացառիկ մեծ արժեք, հնարավորություն է ընձեռում նոր լուսարանություն ապրու Հերոդոտոսի վկայություններին, որ մինչև այժմ մութ են մնացել և սխալ են մեկնվել, հատկապես, մի քանի վրացագետների բանասիրական և պատմադրական երկերում: Հերոդոտոսի այդ վկայությունները, որ դիտական ուսումնասիրություններում հաճախ հիշատակվել են և քննություն են առնվի՝ կարևոր եմ համարում թարգմանաբար մեջ բերել:

1. Հերոդոտոս, գիրք I, գլուխ 104՝

«Մեռտիս լճից մինչև Փասիս դեպը և Կողքիսը լավ դնացողի համար երեսուն օրվա ճանապարհ է, իսկ Կողքիսից շատ չէ անցըը դեպի Մեդական երկիրը: Այս երկու երկիրներն միջև միայն մի ժողովուրդ է գտնվում սասպելյաները, և, այստեղից անցնելուց հետո, կարելի է հասնել Մեդական երկիրը»:

2. Նույնը, գիրք IV, գլուխ 37՝

«Պարսիկները բնակվում են, տարածվելով մինչև հարավային ծովը, որն անվանվում է Էրիթրյան. սրանցից վերև դեպի հյուսիս ապրում են մեդացիները, մեդացիներից վերև սասպելյաները, իսկ սասպելյաներից վերև կոլխերը, որոնք տարածվում են մինչև հյուսիսային ծովը, սրի մեջ է թափվում Փասիս դեպը: Այս չորս ժողովուրդն ապրում են ծովից մինչև ծով»¹:

3. Նույնը, գիրք I, գլուխ 110՝

¹ Համեմատե նաև Herod., IV, 40:

«Այս տեղում դեպի սասպեյրները կողմը Մեգալանը երկիրը խիստ լեռնոտ ու բարձր է և ծածկված է ծառենրով ու անտառներով, իսկ Մեգալանը երկրի մյուս մասը ամբողջը հարթ է»:

4. Նույնը, գիրք III, գլուխ 94՝

«Մասիկներին, սասպեյրներին և ալարոզներին սահմանված էր [վերցնել հարկ] երկու հարյուր տաղանդ, այս տասնութեքուրդ չըջանն էր: Մոսիկերին, տիրարեններին, մակրոններին, մոսսինոյիներին և մարերին սահմանված էր երեք հարյուր տաղանդ. այս տասնհիններուրդ չըջանն էր»:

Հերոդոտոսի այս վկայությունների մեջ հիշատակված սասպեյրներին ելլողական աշխարհազիրները և նրանց հետևելով նաև վրաց գիտնականներից ոմանք համարում են վրացական ցեղ՝, իսկ ոմանք նույնիսկ կարծում են, որ սասպեյրները, հավանորեն, հին իրերներն են և որ իրերների անունը ծագում է որանց անունից: Նույն վկայությունների վրա հիմնվելով Ռավլինոսը, Սվանիձեն և նաև ուրիշները հավանական են համարել, որ Հերոդոտոսի ժամանակ սասպեյրներ-իրերները դրբաված են եղել Իրերիան, Աղվանքը և հետագա Մեծ Հայաստանի հյուսիսային ու արևելյան երկիրները:

Ընդհանրացած այս ենթադրությունները արդյունք են ըստ իս թյուրիմացություն: Համաձայն մեր նոր դիտողությունները սասպեյրները պրոպեմն ևս ստանում է նոր բացատրություն:

Վերև մենք տեսանք, որ Տասը հազարի նահանջի ժամանակ (401-400 մեր թ. ա.) սկյութները տիրած են եղել ո՛չ միայն Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան երկիրներին, այլև Արարատյան դաշտին: Դժվար չէ, ուրեմն, կուհել, որ նաև Հերոդոտոսի ժամանակ (մոտավորապես 484-425 մեր թվ. ա.) նույն այս կողմերում՝ Կողքիսից սկսած մինչև Մեգալանը երկիրը՝ սարել են սասպեյրներ-սկյութացիները և ո՛չ սասպեյրներ-իրերները: Միանդամայն պարզ է, հարկավ, որ Քսենոփոնի

1 Տես, օրինակ, H. Kiepert, Lehrbuch der alten Geographie, Berlin, 1878, էջ 159:

2 Տես, օրինակ, Rawlinson, Hist. of Herodotus, London, 1876, IV, էջ 223. Хаханов А. С. Древнейшие пределы расселения грузин, Тифлис, 1903, էջ 18—20. А. Сванидзе, Материалы по истории алародийских племен, Тбилиси, 1937, էջ 11 և ուրիշ:

Հիշատակած սկյութական ժողովուրդները Հերոդոտոսի վկայություններում անխանված են սասպեյրներ :

Եվ ուշագրավ է, որ սասպեյրներին սկյութական ցեղ են համարել հենց իրենք հույները, ինչպես այդ երևում է Ապոլոնինոս Հուդոսցու Սքոլիաստի վկայությունից¹ :

Միանգամայն սխալ է ըստ իս նաև Ռավլինսոնի և Սվանիձեի նաև մի ուրիշ գլխողությունը, որ իբր թե սասպեյրներ-իբերները դրաված են եղել ամբողջ Հյուսիսային Անդրկովկասը և Աղվանքը և սահմանակից են եղել մեդացիներին Մուղանի դաշտի շրջանում² : Իրապես, ինչպես այժմ պարզվում է, մեդացիներին սասպեյրները սահմանակից են եղել, հավանորեն, այժմյան Շարուր-Նախիջևանի կողմերում :

Ճ. ՔՍԵՆՈՓՈՆԻ ԿՅՈՒՐՈՊԵՂԻԱՅՈՒՄ ՉԻՇԱՏԱԿՎԱԾ շՆԴԻԿՆԵՐԻ ԵՐԿԻՐԸ, ԻՐԱՊԵՍ, ՍԻՆԴԵՐԻ ԵՐԿԻՐՆ ԷՐ

Ի նկատի ունենալով, որ Մեոտիս-Կողքիսյան հին ճանաչարհը դեռ ուրարտացիների տիրապետության ժամանակ եղել է միջազգային բանուկ ճանապարհ, որը դալիս էր Աղովյան ծովի կողմից Ուրարտու և այստեղից դեռած Մեդիա և Պարսկաստան՝ դժվար չէ, իմ կարծիքով, կուսհել, որ Քսենոփոնի Կյուրոպեղիայում հիշատակված հարուստ երկիրը, որի հետ կապ և հաղորդակցություն ունեին խալդերը՝ ոչ թե հնդեիկների, այլ սինդերի թագավորի երկիրն էր : Կյուրոպեղիայի համապատասխան հատվածը, որը մինչև այժմ մութ է մնացել և սխալ է հասկացվել՝ մեջ էմ բերում թարգմանաբար, ընդձեռնով նրա կարևոր մասերը :

Քսենոփոն, Կյուրոպեղիա, դիրք III, գլուխ 2, 25-28՝

«Երեկոյան դեմ Կյուրոսը հրափրեց նրանց լարմեննե-

¹ *Տես Տванидзе*, Материалы по истории алародийских племен, էջ 143: Համեմատե *Латышев*, Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе, СПб. 1890, էջ 424:

² *Նույնը*, Материалы. էջ 11 և 144—145:

րին և խաղերին] իր մոտ հյուր՝ արդեն իբրև բարեկամներէ: Երբ միասին խնջուէք էին անում՝ խաղաչաներէց մեկը ասաց, որ այս ամենը ցանկայի են իրենց բոլորին, սակայն խաղաչաների մեջ կան ոմանք, որոնք ապրում են թալանով և որոնք ոչ գիտեն և ոչ էլ կարող են զբաղվել երկրագործութեամբ, որովհետև սովոր են իրենց ապրուստ հայթայթել պատերազմի միջոցով: Նրանք միշտ կամ թալանով են զբաղվել և կամ ծառայել են վարձով՝ երբեմն հնդկական քաղաքների մոտ, որը, ինչպես ասում են, շատ հարուստ մարդ է, երբեմն նաև Աստիագեսի մոտ: Կյուրոսը ասաց. «Ինչո՞ւ նրանք չեն ծառայում այժմ վարձով և ինձ մոտ: Ես կվճարեմ այնքան, որից սովելին մի ուրիշը երբեք չէ վճարել»: Նրանք հավանութուն տվին և ասացին, որ ցանկացողներ, անշուշտ, շատ կլինեն: Եվ այս խնդիրները մասին նրանք չենց այսպես հավանութեան եկան: Իսկ Կյուրոսը, երբ լսեց որ Խաղաչաները գնում են հաճախ Հնդկիկ մոտ [Πόλις τὸν Ἰνδόν], հիշելով որ նրա մոտից մարդիկ էին եկել մեդացիների մոտ՝ որպեսզի ծանոթանան սրանց զործերին, և դնացել էին նաև թշնամիները մոտ, որպեսզի տեսնեն և նրանցը՝ ուղեց որ Հնդկիկ իմանա այն, ինչ որ ինքն արել է: Արդ՝ նա ասաց հետևյալը. «Ո՞վ Արմենների թագավոր՝ և զուր ո՞վ խաղաչաներ, ասացե՛ք ինձ, եթե ես այժմ իմ մարդկանցից մեկին ուղարկեմ Հնդկիկ մոտ՝ արդյոք կուղարկե՞ք նրա հետ ձեր մարդկանց նրա մոտ, որ ցույց տան քաղաքարիք և նրան աջակցեն, որպես զի մենք Հնդկիկից ստանանք այն, ինչ որ ես ցանկանում եմ: Ես կցանկանայի, որ մեր ձեռքին շատ փող լինի, որպես զի կարողանամ թե առատաձեռն վարձ տալ, ում որ հարկավոր է, և թե պատվել մարտակիցիներից արժանավորներին»:

Հիմնվելով Քսենոփոնի այս վկայութեան վրա՝ պատմագետները շատերը ենթադրել են, որ Կյուրոս Մեծի ժամանակ արմենները և խաղաչները կանոնավոր առևտրական հարաբերութուններ են ունեցել Հնդկաստանի հետ և արտահանել են այնտեղից ապրանքներ: Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին

1 Տես J. Sandaljian, Histoire documentaire de l' Arménie, II, էջ 392, Ա. Քաղաքացեսի, Քննական պատմություն, Ա. էջ 70 և որիչ:

առևերեն իմ աշխատութեան մեջ եւ մասնացույց էի արել, որ ո՛չ միայն անհավանական են արձեւներէ եւ խաղերէ առևարական անմիջական կապերը Հնդկաստանի հետ, այլև միանգամայն անհավաստի է և այն, որ իբր թէ խաղերը հաճախ լինում են Հնդկաստանում: Քսենոփոնի այս կասկածելի վկայութեանը ևս բացատրել էի նրանով, որ նա Ուարթուսի խաղերին կարող էր շփոթած լինել քաղաքացիներէ հետ, որոնք ապրում էին Պարսից ծոցի հյուսիսարեւմտյան ափերին և ունեին, իրապես, առևարական կապեր Հնդկաստանի հետ:

Ինձ թոյն է այժմ, որ Կյուրոպեղեայի անհասկանալի վկայութեանը կարելի է մեկնել այլ կերպ:

Վերոհիշյալ հատվածում "Ινδος-ը, որ նշանակում է հնդկի կամ հնդկիների թագավոր, ըստ իս ակճատված ընթերցված է: Առկելի քան հավանական է, որ "Ινδος-ը պետք է ուղղել և կարդալ Σίνδος, որ նշանակում է Սինդ կամ Սինդերի թագավոր: Պլինիոսի ուշագրավ մի վկայութեանց հայտնի է², որ Հնդկաստանի Indus գետը իրենք տեղացիներն անվանել են Sindus: Պարզ է, ուրեմն, որ Indus և Sindus հեշտութեամբ կարելի էին իրար հետ շփոթվել և իրար փոխարինել:

Մեր առաջարկած սրբոց ու ընդունելի սրբապոստութեանց հետ Քսենոփոնի վկայութեանը ստանում է բոլորովին նոր ու հավանական իմաստ: Կյուրոպեղեայի վերոհիշյալ հատվածի մեջ հիշատակված են ըստ իս ո՛չ թէ հնդկիները, այլ սինդերը, որոնք, ինչպես հայտնի է, հենց Կյուրոս Մեծի ժամանակ (550-530) մեր թվ. առաջ) հզոր ու հարուստ ժողովուրդ էին և ապրում էին այժմյան Անափայի շրջանում:

Հունական ափանդութեանը հիշատակում է սինդերի նշանավոր նավահանդիստը, որի միջով նրանք արտահանում էին իրենց արտադրանքները, նաև այդ նավահանդիստի մոտ հիմնված խոշոր քաղաք Գորգոսպոլիան, որն ըստ ափանդութեան սինդերի թագավորական աթոռանիստ քաղաքն էր³:

Ըստ երևույթին, սրանց երկիրը հայտնի է եղել խաղերին և հարեան մեղացիներին իբրև հարուստ ու հզոր պետություն:

¹ Տես իմ աշխատութեանը, О торговле и городах Армении, Ереван, 1930, էջ 13—14:

² Plin, Nat. Hist. VI, 23, (հրատար. Littre-ի):

³ Տես Ростовцев М. И. Эллинизм и иранство на юге России, Пет-роград, 1918, էջ 123:

Եվ կարելի է նաև հավանական համարել, որ նրանք առևտրական կապակցություն են ունեցել և Ուրարտուի և Մերձավոր Արևելքի հետ Մեոտիս-Կողքիսյան այն ճանապարհով, որը, ինչպես տեսանք, մեծ դեր էր կատարում հին ժամանակներում:

6. ԱՐՄԱՏԱԿԱՆ ՑԵՂԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ Sirac-ՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՇԻՐԱԿՈՒՄ

Քսենոփոնի և հույն գործերի 401—400 թվի (մեր թվ. ա.) նահանջից հետո, ինչպես կարելի է կռահել հունա-հռոմեական աղբյուրների ցուցումներից, Շիրակում տեղի էր ունեցել քաղաքական նոր փոփոխություն, որի ժամանակը, դժբախտաբար, մնում է անորոշ: Ըստ երևույթին, ութերորդ դարի կի՞մերական մեծ արշավանքից հետո, հավանորեն, դարձյալ Մեոտիս-Կողքիսյան հին ճանապարհով Անգրիպոլիս էին արշավել սարմատական ցեղեր և, զլխավորապես, Sirac-ները, որոնք հաստատվել էին Քսենոփոնի հիշատակած սկյութների երկրում և որոնց անունն է կրում Հին Հայաստանի Շիրակ դաշտը: Շիրակ կամ Siracene հիշատակված է ո՛չ միայն հայկական աղբյուրներում, այլև Պտղեմեոսի աշխարհագրության մեջ:

Սիրակների մասին կարևոր են ու ուշագրավ Ստրաբոնի վկայությունները, որ ավելորդ չեմ համարում թարգմանաբար մեջ բերել ամբողջությամբ:

1. Ստրաբոն, XI, 2, 1 (492)՝

«Սրանցից [սկյութացիներից] ավելի հեռուներում ըլլանակվում էին սարմատները, որոնք նույնպես սկյութացիներ են, այն է՝ սորաները և սիրակները, որոնք տարածվում էին դեպի հարավ մինչև Կովկասյան լեռները. որանց մի մասը նոմադներ են, մի մասն էլ նստակյաց հողագործներ են»:

2. Ստրաբոն, XI, 5, 8 (506)՝

«Իսկ այնուհետև կարգով հետևում են Մեոտիսի և Կասպից ծովի միջև դանվող նոմադները՝ նաբիանները և պարթսանները, ու ապա սիրակները ու սորանների ցեղերը:

1 Ptolem. հրատարակ. K. Müller-ի, I, էջ 938.

Այս ատրաները և սիրակները, ըստ երևույթին, վերելիներէ-
 վտարանդիներն են... և ավելի հյուսիս են ատրաները: Երբ
 Փառնակը իշխում էր Բոսփորում՝ սիրակների Արեակոս-
 թագավորը նրան ուղարկեց 20.000 հեծելազոր, ատրաների
 թագավոր Սպարդինսը՝ նմանապես քսան, իսկ վերևում
 ապրող ատրաները ավելի շատ. նրանք տիրել էին ընդարձակ
 երկիրների և իշխում էին կասպիականների ծովափի զբեթե
 մեծազույն մասի վրա. ուստի և նրանք առևտուր էին անում
 և տեղափոխում ուղտերով հնդկական և բարեկանական աղ-
 ըանքների բեռներ, ստանալով արմենների և մեղաքիների կող-
 մից: Հարուստ լինելու պատճառով նրանք կրում էին ոսկե-
 զարդ զգեստներ: Ատրաները բնակվում էին Տանախի մոտ,
 իսկ սիրակները Աքարդեոն գետի, որը, Կովկասյան լեռներից
 հոսելով՝ թափվում էր Մեոտիս»:

Ծիրակում բնակութուն հաստատած սիրակները, ինչպես
 ենթադրում է Ադոնցը¹, հիշատակված են նաև Պլինիոսի
 հետևյալ վկայութան մեջ, որը վերաբերվում է Կողքիսի
 բնակչութանը:

«Միտակուրիասից հետո, — ասում է Պլինիոսը², — գտնվում
 է Հերակլեում քաղաքը՝ Սերաստոպոլիսից 70.000 քայլ
 հեռավորության վրա. այդ նաև ախեյները, մարդերը և
 կերկեանները, իսկ սրանց հանում սերրերը [serrae=sera-
 ci]³. և կեփալոտոմները (= «գլուխ կտրողները»):

Որ Պլինիոսի այս վկայութունը վերաբերվում է, իրապես,
 Կողքիսից հարավ իջած sirac-ներին՝ այդ պարզ երևում է
 նրանից, որ իբրև սիրակների հարևաններ մատնանշված են
 կեփալոտոմները, որոնք, ինչպես շատ ճիշտ նկատել է Ադոնցը,
 Ստրաբոնի հիշատակած սարապարաններն (= «գլուխ կտրողներ»)
 են, որ ապրում էին Ծիրակ-Վանանդի կողմերում: Նոր գաղթա-
 կանութունը, ինչպես տեսնում ենք, ապրել է կողք-կողքե
 կիմմերական-սկյութական նախկին բնակչութան հետ:

Որ Ծիրակ գալառի անունը ծագել է siraci կամ շիրակ
 ցեղի անունից՝ այդ առաջին անգամ ցույց է տվել Բ. Պատկան-
 յանը:

1 Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 424 ծան. 3:

2 Plin., Nat. Hist. VI, 5, 2 (հրատար. Littré-ի):

3 Ադոնցի ծառայած Պլինիոսի Teubner-յան հրատարակութունը
 serrae-ի փոխարեն ունի seraci:

«Ինչ վերաբերվում է Շիրակին, — ասում է Պատկանյանը¹, — այդ դավառն իր անունը ստացել է շիրակների (Σιρακιες, Σιρακιαι, Siraci) անունից, որոնք ըստ Պտղեմոսի, Սարարանի և Տակիտոսի բնակվում էին հյուսիսային Կովկասի մոտ և այնտեղից ներխուժում էին միջառ. Հայաստան, ուր նրանց մի մասը, հավանորեն, բնակություն էր հաստատել և մնացել»:

Ուշադրով է ու առանձնապես հետաքրքիր, որ հայ ժողովրդական ավանդություններում երկար դարերի ընթացքում պահպանվել էին հիշողություններ շիրակների նախահոր Շարայի մասին: Այս ավանդությունը, որ մեջ է բերված Խորենացու պատմության մեջ, ինչպես կտեսնենք, միանդամայն պատմական է և համապատասխանում է շիրակների ծագման մասին օտար աղբյուրների հաղորդած տեղեկություններին:

Խորենացու համապատասխան վկայությունը մեջ եմ բերում ընդարձակ բովանդակությամբ:

«Այս Արամանյակը, — պատմում է Խորենացին, — տարիներ աղբեց և ծնավ Արամայեխին. իսկ հետո դարձյալ շատ տարիներ աղբելով մեռավ: Նրա որդին Արամայիսը շինում է իրեն համար բնակություն տուն մի բլրի վրա գետի ափին և իր անունով կոչում է Արամայիր, իսկ գետը կոչում է նրասիս իր նրաստ թոռի անունով: Եվ իր որդուն ըստ պատմության ու շատակեր Շարային ամբողջ նրա տունուտեղով ուղարկում է մոտակա արդավանդ ու բարերեր մի դաշտ, որտեղ հոսում էին շատ ջրեր. ուղարկում է հյուսիսային այն լեռան թիկունքը, որն անվանվեց Արագած: Արա [Շարայի] անունով, ասում են, դավառը կոչվեց Շիրակ: Թվում է այսպիսով, որ արդարանում է գյուղացիների մեջ ասվող առածը. «Եթե, ասում են, ջո որկորը Շարայինն է, մեր ամբարները Շիրակինը չեն»:

[«Այս Արամանյակ կեցեալ ամս՝ ծնաւ զԱրամայիս. և յետոյ կեցեալ ամս շատ՝ մեռաւ: Իսկ որդի նորա Արամայիս շինէ իւր տուն բնակութեան ի վերայ ոստոյ միոյ առ կերբը գետոյն, և անուանէ զիս յիւր անուն Արամայիր: և զանուն զետոյն յանուն թոռին իւրոյ նրաստայ՝ նրասիս: Եւ զորդէ

¹ К. Патканов, Ванские надписи и значение их для истории Передней Азии, С. Петербург, 1881, էջ 112.

իւր Ծարայ, զյոյլովածին և զշատակեր, առաքէ ամենայն աղիւիւ իւրով ի դաշտ մի ծոտաւոր, արդաւանդ և բերրի, յորում դեան ջուրք ոչ սակաւք, ի թիկունս հիւսիսոյ լիւրինն, որ անուանեցաւ Արաբաճ: յորոյ անուն և զդաւանն սակն անուանեալ Երբակ: Վասն որոյ թուի արդարանալ առասպելին, որ ասի ի մէջ զեղջկաց. «Թէ քո Ծարայի որկորն է՝ ասեն, մեր Երբակայ ամբարքն չեն»¹:

Մեջ բերված այս վիպաբանական մեջ ուշադրութեան արժանի է, զլիափորապես, այն, որ Սորենացին Երբակի նախահայր ու անվանադիր համարում է Ծարային: Սորենացու այս ցուցումը նորերս քննութեան է առնված Ղափանցյանի աշխատութեան ներքեց մեկնում²: Ժխտելով Սորենացու վերոհիշյալ մեկնութունը և համարելով Երբակ անվան ծագումը Ծարա անունից լեզվադիտորեն կասկածելի և անհավանական՝ Ղափանցյանը միաժամանակ մատնանշում է, որ Սորենացու հիշատակած Ծարան «էպոնիմ է և իր մեջ անձնափորում է որոշ տոհմի կամ ցեղի անուն»: Ղափանցյանի ենթադրութեանները, ինչպես կատեններք, լիովին հաստատվում են:

Ակադեմիկոս Պափախիշվիլին իր վերջին հոդվածներից մեկում մի շարք կարևոր զիտոլոգիականներ էր արել սարմատ ցեղի անվան կազմութեան մասին³: Նա համոզվիչ կերպով ցույց էր տվել, որ սար-մատ կամ ավելի ճիշտ՝ շար-մաթ անվան մեջ շար կամ շարո ցեղի անուն է, իսկ-մատ, ինչպես ցույց է տվել Նիկ. Մսոր⁴, նշանակում է «լեզու» կամ «ժողովուրդ»: Պափախիշվիլին, բացի այդ, մատնացույց էր արել, որ մրաց պատմադիր Գեորգի Մերչուլի կարևոր մի վիպաբանության հայտնի է, որ Արխադիայի հյուսիսային մասում հին ժամանակներում գտնվել են Ծարոյան թագավորի կարվածները⁵: Նույն այդ Ծարո ցեղի

¹ Խաբնացի, I, գլ. ԺԲ, էջ 39—40 (Տփղիս, 1913):

² Տես Գ. Կարանյան, Историко-лингвистическое значение топонимики древней Армении, Научные труды Ерев. Госуд. Унив., т. XIV, 1940, էջ 372—376:

³ Տես Ի. Ա. Джавахишвили, Основные историко-этнол. проблемы истории Грузии, Кавказа и Ближнего Востока древнейшей эпохи, Вест. древ. ист., № 4, 1939, էջ 39—42:

⁴ Տես Մարր, Кавказские племенные названия и местные параллели, էջ 20—21:

⁵ Տես Գ. Мерчул, Житие Григория Хандзтийского, Тексты и разыскания по армяно-грузинской филологии, VII, СПб. 1911, էջ 58 և 59:

հեռքերը, ինչպես ցույց է տվել Ջալախիչլիին, նկատելի են նաև Անդրիզիկասի զանազան վայրերում:

Ջալախիչլիում դիտողութունները, ինչպես տեսնում ենք, լույս են ափսոսմ նաև Խորենացու վիպագրության վրա: Պարզվում է, որ պատմահոր հիշատակած Ծարան անվանադիր նախնին էր շար-մատները և նախահայրն էր շիրակները, որոնք բնակութուն էին հաստատել Արագած լեռան հյուսիսակողմում Տասը հազարի նահանջից հետո, հավանորեն, չորրորդ կամ երրորդ դարում մեր թվականութունից առաջ: Ճշտիվ հաստատվում է նաև Ծարայի բարձրագավառի լինելը: Իբրև սարմատական կամ շարմատական ցեղեր հունա-հույնական աղբյուրներում բացի շիրակներից մատնանշված են նաև եաղիղները, ուրսուլանները, աորանները, էպաղերիտները, ալանները և այլ աղբյուրներ:

Այսպիսով ժողովրդական այսնությունը Ծարայի մասին, որ պահպանվել է Խորենացու պատմության մեջ, ստանում է հավանական նոր բացատրություն և պարզվում է վերջնականապես, որ Ծիրակ գոյատուրը գաղթավայր է եղել սարմատական կամ շարմատական շիրակ ցեղի:

Սիրակների և աորանների մասին առանձնապես կարևոր է Սարարոնի վերև մեջ բերված վիպագրությունը: Այդ վիպագրության մեջ, ինչպես տեսանք, մատնանշված է, որ սարմատական այս երկու ցեղերը, որոնք հարուստ էին և կրում էին սոսկադրդ գեղատներ՝

«առևտուր էին անում և տեղափոխում ուղտերով հնդկական և բարելունական ապրանքների բեռներ, ստանալով արժենների և մեղացիների կողմից»:

Եվրոպական դիտնականներից կարելի է ճանաչել, որը մանրամասն քննության է արժանի Սարարոնի օգտագործած սկզբնաղբյուրների խնդիրը՝ ենթադրում է, որ միջագոյային առևտրին վերաբերող այս տեղեկությունը կարող է քաղված լինել Թևոփանես Միտիլենացու պատմությունից, որն անձամբ մասնակցել էր Պոմպեյոսի արշավանքներին և այդ առևտրի միջնորդներ թյուրիմացաբար համարել է աորաններին, որոնք, իրապես, ապրում էին հեռավոր հյուսիսում: Իսկ զխոնականների մեծա-

1 K. J. Neumann, Strabons Landeskunde von Kaukasien, Jahrbücher für Classische Philologie, XIII Supplementband. Leipzig, 1883, էջ 349—350:

զոյն մասը, արժանահավատ համարելով Ստրարոնի հաղորդած տեղեկությունը, բայց, անտեղյակ լինելով Մեոտիս-Կողբխյան ճանապարհի կարևոր նշանակությանը՝ ենթադրում են, որ կարավանների միջազգային ճանապարհը, որ վալիս էր հարավային Ռուսաստանի կողմերից Մեդիա և Պարսկաստան՝ անցել է ո՛չ թե այդ, այլ ուրիշ ուղղությամբ:

Այս ենթադրություններից և ոչ մեկը, իմ կարծիքով, ընդունելի չէ:

Մենք արդեն վերև տեսանք, որ Առաջավոր Ասիայի ասովտրակհան սերտ կապը հեռավոր հյուսիսում դանիոզ Տանախի և հարավային Ռուսաստանի հետ ակնարկված է և այլ աղբյուրներում: Իսկ որ այդ հաղորդակցությունը տեղի էր ունենում, գլխավորապես, Մեոտիս-Կողբխյան ճանապարհով և ո՛չ Տարյալի կիրճով կամ Գերբենտի անցքով՝ այդ կարելի է հետևյալի թե մեր վերոհիշյալ գիտողություններից և թե Ստրարոնի վկայությունից: Ստրարոնը հենց ինքը, ինչպես վերև տեսանք, խոսելով կարավանային առևտրի մասին՝ չէ հիշատակում ո՛չ Իբերիան ո՛չ էլ Ադվանքը, այլ մատնանշում է, որ սիրակները և աորսները հնդկական և բարելոնական ապրանքների բեռները ստանում էին արմենների և մեդացիների կողմերից, սկնարկելով դրանով Արմենիայի վրայով անցնող Մեոտիս-Կողբխյան ճանապարհը:

Սարմատական ցեղերը, որոնք բնակություն էին հաստատել Հայաստանում և Անդրկովկասում, ինչպես երևում է Հերոդոտոսի կարևոր մի վկայությունից, խոսում էին սկյութական բարբառ: Գիտնականների մեծազույն մասը համարում են նրանց իրանական ցեղ, աղակից այժմյան օսերին (արաններին), որոնք, նրանց կարծիքով, սարմատական խմբի ժողովուրդ են: Հակառակ այս կարծիքի Նիկ. Մառը և նրան հետևող հարեթաբանները սկյութական լեզուն ենթադրում են հարեթական, բայց նրանք ևս ընդունում են, որ սկյութացիները գտնվել են իրանական կուլտուրայի և լեզվի աղբյուրության տակ: Վերջերս այս հարցով զբաղվել է հատկապես սկադ. Ջախախիշվիլին, որը գտնում է, որ սկյութացիներն ու սարմատները կաղձում են մի առանձին ճյուղ ադիգե-լեզվի՝ չեչենական ժողովուրդների:

¹ Джавахишвили, Основные историко-этнологические проблемы Вост. древ. ист., № 4, 1939, էջ 44:

Սիրակիները զաղթը և հաստատումը Շիրակում խելոյ կարեւոր մի փաստ է, որ արժանի է առանձին ուշադրութեան։ Ի նկատի առնելով, որ սրանք մասնակիցներ էին և միջնորդներ միջազգային կարավանային առևտրի՝ կարելի է թերևս ենթադրել, որ սրանց արշավանքը և շարժումը հյուսիսային Կովկասից Հայաստան տեղի էր ունեցել ո՛չ միայն ավարտութեան, այլև Հայաստանում դանխոյ կարավանային ճանապարհին արևադեհաբու նպատակով։ Ուշադրով է այս տեսակետից, որ սիրակիները զաղթավայրերը զտնվում էին Մեոսիս-Կոլքիսյան ճանապարհի առևտրական հանդուցակետերում՝ հյուսիսային Կովկասում, Արխաղիայում, Շիրակում և, հավանաբար, նաև Ծարուբում։

Պետք է ասեմ, որ հին այս ճանապարհի առևտրական մեծ դերը բավարար չափով ուշադրութեան չէր տնված «Հայաստանի առևտրի և քաղաքների մասին» սուսերեն իմ աշխատութեան մեջ։ Ասորաների կարավանային առևտրի ճանապարհը համաձայն Եվրոպական գիտնականների ցուցումների այդ աշխատութեան մեջ ևս ևս ենթադրել էի Դերբենաի վրայով։

Այս խնդրի վերաբերյալ մեր նոր ենթադրութեանը լույս է սփռում այժմ քաղաքների մեծ զարգացման վրա Կոլքիսյան ծովկերպ շրջաններում։ Գլխավոր քաղաքներն էին այստեղ Փասիսը (այժմյան Փոթին) և Դիոսկուրիսը, որոնք խոշոր կենտրոններ էին միջազգային առևտրի հարավային Ռուսաստանի և Արևելքի հետ։ Սարարոնը անվանում է Փասիսը «կոլխերի վաճառատեղի», իսկ Դիոսկուրիսը՝ «ընդհանուր վաճառատեղի բոլոր ժողովուրդների, որոնք ապրում էին նրանից վերև կամ նրա մոտ»²։ Փասիսի վերաբերմամբ ուշադրով է, հատկապես, Անանուհի հեղինակի «Նավարկութեան Եվրասիայան Պոնտսի շուրջը» երկում հաղորդած տեղեկութեանը, որ այդ հունական քաղաքը, որ հիմնել էին միլետացիները, զալիս էին օտարականները Հնդկաստանից և Բաղդադիայից³։

Կոլքիսի քաղաքների անտեսական բարդավաճումը պայմանավորված էր, ինչպես տեսնում ենք, գլխավորապես, նրանով, որ նրանց մոտով էր անցնում Մեոսիս-Կոլքիսյան միջազգային ճանապարհը։

1 Տես «О торговле и городах Армении», էջ 47.

2 Strabo, XI, 2, 16 և 17 (498).

3 Տես Латышев, Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе, СПб. 1890, I, էջ 274:

7. «ԳՈԳ»-ԵՐԻ ՍԿՅՈՒԹԱԿԱՆ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ
ԳՈՒԳԱՐՔԻ ԵՆԹԱՐԿՈՒՄԸ ՆԱԽ ԻԲԵՐՆԵՐԻ ԵՎ
ԱՊԱ ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ

Վերոհիշյալ եզրակացությունների հիման վրա, որոնք հաստատում են կրթմերական, սկյութական և սարմատական ժողովուրդների հաստատումը Հայաստանի հյուսիսում՝ լուսարանվում է ու նոր բացատրություն ստանում Հին Հայաստանի Գուգարք երկրի բնակչության էթնիկական ծագումը:

Այս երկրի անունը ԲՕԴ, ԲԴԿՂ ձևով առաջին անգամ հիշատակված է Ստրաբոնի հեռեկալ վիկյություններում:

1. Ստրաբոն, XI, 14, 4՝

«Իրեն Հայաստանի մեջ կան շատ լեռներ և շատ լեռնադաշտեր, որոնց մեջ խաղողի որթը զժվարությամբ է աճում: Կան նաև շատ հովիտներ կամ չափավոր կամ խիտ բերրի, ինչպես օրինակ, Արաքսեյան դաշտը, որի միջով հոսում է Արաքս գետը մինչև Ադվանքի ծայրը և թափվում է Կասպից ծովը: Սրա հեռեկամն է Ծակաչենը, որը սահմանակից է Ադվանքին և Կուր գետին. իսկ այնլի հեռուն է Գուգարքը»:

2. Նույնը, XI, 14, 5՝

«Պատմում են, որ Արմենիան եղել է առաջ փոքր և մեծացել է Արտաշեսի ու Զարեհի միջոցով, որոնք սկզբում Անտիոքոս Մեծի զորավարներն էին, իսկ ապա, նրա սարսույթյունից հետո, թաղավոր դառան, մեկը՝ Ծուրքի, Ակիսենի, Օլոմանտիսի և մի քանի այլ գաղառների վրա, իսկ մյուսը՝ Արտաշատի շրջակայքում: Սրանք ընդարձակել էին իրենց երկիրների սահմանները և շրջակա ժողովուրդներից զբաղվել էին հեռեկալ շրջանները. մեզացիներին՝ Կասպիանեն, Փավնիտիսը և Բասորոպեդան, իբրևներից՝ Պարխաղբուսի լեռնալանջերը, Սորգենեն և Գուգարենեն, որ գտնվում է Կուր գետի մյուս կողմում, խալյուրներից և մոսսինոյկներից՝ Կարենիտիսը և Դեբքանեն, որոնք սահմանակից են Փոքր Հայքին կամ նրա մասերն են, կատաններից՝ Ակիլիսենեն և Անտիտալրոսի կողմերը գտնվող երկիրը և ասորիներից՝ Տամրիտիսը»:

Մեջ բերված Ստրաբոնի այս վիկյություններից երևում է, որ առաջին դարում մեր թվականությունից առաջ Հին Գուգարե-

նեն ընդարձակ երկիր էր, դառնում էր Կուր դետի աջ կողմում 2, տարածվում էր մինչև Ուտիքի Շակաշեն դալատը և բովանդակում էր իր մեջ պատմական Հայաստանի հյուսիսային շրջանները, որոնք սահմանակից էին Իբերիային 3:

Գողարենն անվան կաղմության ուղիղ մեկնությունը տվել է Ա. Շանիձեն 2: Նրա կարծիքով, այս տեղանունն ունի էթնիկական ծագում և բաղկացած է «գոդ» ցեղանունից և սովորական մեղրի-ճանական ար անունից: Գուղարք-Գուղարներ տերմինը ըստ Շանիձեի նշանակում է «գուղեցի»-ներ կամ համաձայն հունական հնչյունափոխության՝ «գողեցի»-ներ:

Ղափանցյանը մասնանշում է, բացի այդ, որ «գոդ» տերմինը այն գոդ ժողովրդի անունն է («Գողեր և Մաղոզներ») 3, որ հիշատակված է Հին Կտակարանում 3: Էթնիկական ծագումը Հին Կտակարանում մասնանշված «գոդ» ժողովրդի Ղափանցյանի մոտ, ղժբախտարար, չէ լուսարանված:

Կարևոր այս խնդիրը պարզաբանված է վերջերս Մ. Սյուլյյունովի մի հոդվածում, որ լույս է տեսել «Տեղեկագիր հին պատմության» ուսուսական հանդեսում 4:

Հին Կտակարանում հիշատակված «գոդ և մաղոդ» ու նաև «ռոս» ժողովուրդները անունները, ինչպես մասնացույց է անում Սյուլյյունովը, կառ ունենին այն մարդարեություններին հետ, որ վերաբերվում են աշխարհի վերջին: Եվ հենց այդ է պատճառը, որ այդ անունները հիշվում են հաճախ եկեղեցական գրականության մեջ:

Այդ անունները հանդիպում են Եղեկիէլի մարդարեության հունարեն թարգմանության մեջ՝

«Եւ եղև բան Տեառն առ իս և առէ,— որդի մարդոյ, հաստատեա՛ զերեսս քո ի վերայ Գողայ և երկրին Մաղոդայ, իշխանի Ռովայ» 5:

1 Հին Գուղարի տեղը Ղափանցյանի մոտ ցույց է տրված Արամուշ գետի կողմերում, որ հիշյալ չէ և չէ համապատասխանում Ստրաբոնի վկայության. տես Երեմ. Պետ. Համ. Գիտ աշխ., XIV, 1940, էջ 376:

2 А. Шакидзе, Два чаномингрельских суффикса в грузинском и армянском языках, Петроград, 1916:

3 Տես Երեմ. Պետ. Համ. գիտ. աշխ., XIV, 1940, էջ 377:

4 М. Сююмов, «К вопросу о происхождении слова Գո՛ւ, Գո՛ւի, Россия», Вестник древ. ист., 2, 1940, էջ 121—123:

5 Եղեկ. 38, 2. «Ռովայ» ընթերցվածն ունի հունարեն թարգմանությունը:

Հիշատակվում են նրանք և Հայտնութեան մեջ՝

«Եւ յետ հազար ամին լուծցէ դատանայ և հանցէ ի բանակ անտի: Ելցէ և մարտեցուցէ զաղղս ամենայն ընդ-չորս հոգմանս երկրի: Եւ զԳող և զՄաղու պոյցէ ի ձեռս՝ ժողովել նոքօք դամենայն զօրս ի պատերազմ: որոյ թիւ էրբև գաւազ ծովու: Եւ ելցեն ի լայնութիւնս երկրի և սրտեսցեն դրանակս սրբոցն և զքաղաքն սիրելիք»¹:

Համաձայն Հին Կտակարանի մեկնիչների մեծապէս մասի կարծիքի՝ «գող», «մաղու» և «ոռ» ժողովուրդներն ապրում էին հյուսիսում, Կովկասյան լեռների մյուս կողմում, և սրտեկանում էին սկյութական հյուսիսային ցեղերի խմբին: Նույնը վկայում է, հատկապէս, «մաղու»-ները նկատմամբ Հովսեփոս Փլավիոսը²:

Հենվելով այս վկայութեանները վրա, ինձ թվում է, կարող ենք վստահօրէն եզրակացնել, որ Գողարենե-Գուղարքում բնակութեան հաստատած «գող»-երը սկյութական կամ սարմատական այն ցեղերի խմբիցն էին, որ զաղթել էին Անդրկովկաս հարավային Ռուսաստանից:

Պատմական Հայաստանի հյուսիսում իշխող կիմերական, սկյութական և սարմատական ժողովուրդները հեռոջհեռե թուրացան, հալանտրեն, երրորդ կամ երկրորդ զարերում մեր թըվակհանութեանից առաջ: Դրա պատճառը, ըստ երևույթին, ո՛չ միայն նրանց պայքարն էր նոր նվաճող ցեղի, արմենների դեմ, այլև, դեռ զրանից առաջ, հյուսիս-արեւմուտքից եկող վրացական ժողովուրդների հաղթական առաջխաղացումը դեպի հարավ և արևելք իրերների առաջնորդութեամբ:

Վրացական այս ժողովուրդները, ինչպէս վերև տեսանք, Արեւմեանյան Պարսկաստանի տիրապետութեան ժամանակ գտնվում էին ասանիններորդ սատրապութեան կազմի մեջ և վճարում էին հարկ՝ 300 տաղանդ: Սակայն, հալանտրեն, արդէն չորրորդ դարում մեր թվականութեանից առաջ Իրերիան հեռոջհեռե կարողացել էր իր վրայից թոթափել այդ լուծը և Պարսկաստանի անկումից հետո (330 մեր թվ. առաջ) նա արդէն անկախ ու ուժեղ պետութեան էր:

Շուտով զրանից հետո, ինչպէս երևում է Ստրաբոնի վերջ-հիշյալ վկայութեան պարզ ակնարկից, վրացական ժողովուրդներ-

¹ Հայտնութ., 20, 7—8:

² Jos. Flav., Antiquit., I, 6, 1 § 123.

քի միութեանը, որ խմբվել էր ուժեղացած Իրերական թաղա-
վորութեան շուրջը՝ ընդարձակուժ է նոր պետութեան սահման-
ները, նվաճելով ու իր իշխանութեանը ենթարկելով հարեան
սկյութեական ցեղերը, որոնք բնակվում էին Գուգարքում և
այժմյան Արգահանի մոտ գտնվող Խորգենն երկրում¹: Մարտո-
նի նույն վիճակութեանից երևում է, բացի այդ, որ Անդրկովկա-
սի քաղաքական կյանքում նոր մեծ փոփոխութեան տեղի էր
ունեցել երկրորդ դարի սկզբում մեր թիվականութեանից առաջ
Մեծ Հայաստանի հզորացման ու ընդարձակման ժամանակ:
Արտաշես Ա-ը, գտնալով Մեծ Հայքի թագավոր (189 մեր թվ-
ա.), իր իշխանութեանը ենթարկեց և միացրեց Հայաստանին
ս'չ միայն սկյութական ցեղերի զբաղված մերձարքայան երկիր-
ները, այլև իրերեներից խլված Գուգարքը և Խորգենն:

Ուշագրքով է ու հետաքրքիր, որ «Կող»-երը էթնիկական
ճաղման մասին աղոտ հիշողութեաններ պահպանված են Մով-
սես Խորենացու պատմութեան մեջ: Համապատասխան այդ հաս-
վածը մեջ եմ բերում ամբողջութեամբ:

Խորենացի, գլխք II, գլուխ 8՝

«Իսկ Գուշարին, որ Շարայի որդիներեց էր, ժառանգու-
թեան ավեց Մթին լեռը, որ Կանդարքն է, և Զալխաքի կես
մասը, Կողքը, Ծորը, Զորը, մինչև Հնարակերտ ամբողջը:
Բայց Աշոցքի տերութեանը և Տաշլիքի սեպտականութեանը
Վաղարշակը չնորհում է Հայկազն Գուշարի զավակներին:
Իսկ հյուսիսի կուսակալ Կովկաս սարի դեմ կարգում է մեծ
ու հզոր ցեղը և նահապեաների անունը դնում է Գուգար-
ների բղեշխ»:

[«Իսկ Գուշարայ, որ յորդուցն Շարայի, ժառանգեաց
պետոն Մթին, որ է Կանդարք, և զկէս մասինն Զալխաց,
զԿողք, զԾոր, զԶոր, մինչև ցամուրն Հնարակերտ: Բայց
զտէրութիւնն Աշոցայ, և զսեպտականութիւնն Տաշրաց կար-
զէ Վաղարշակ ի գաւակացն Գուշարայ Հայկազնոյ: Իսկ
ընդդէմ լերինն Կաւկասայ կողմնակալ հիւսիսոյ կարգէ զմեծ
և զհզոր սղղն, և նահապետութեանն անուն կարգայ
բղեշխ Գուգարացոց»]:

Խորենացու այս վիճակութեան մեջ, ինչպես ուղիղ մասնա-

¹ Խորգենն երկրի տեղագրութեան մասին տես իմ «հոգիւմը» «Мар-
шруты понтийского похода Помпея и путь отступления Митридата в
Колхиду», Вест. древ. ист., № 3—4, 1940, էջ 98—99.

նչէլ է Աբոնցը¹, Ծարայը ու Գուշարը պարզապէս էսոսնիմներ են և Գուշարը տեղանունը կապ ունի Գուշարի անվան հետ: Մենք արդէն վերև տեսանք, որ ըստ հին ավանդութեան սիրակներէ կամ չիրակներէ նախահայր է համարվել Ծարայը: Գժվար է՛, ուրեմն, եղբակացնէլ, որ համաձայն նույն այդ ավանդութեան Գուշարքի «գող» կամ «գուշ» ցեղը, որի նախահայրն էր Ծարայի սերունդից Գուշարը՝ պետք է լիներ, ինչպէս և չիրակներէ ցեղը, սկյութական ժողովուրդ՝ ազգակից սարմատական-սկյութական ծագում ունեցող Ծարայան ցեղերին:

«Գող»-երի կամ «գուշ»-երի սկյութական ցեղ լինելը, ինչպէս տեսնում ենք, հաստատուած է ո՛չ միայն Հովսէպոս Փլավիոսի և այլ աղբյուրների վկայութեաններով, այլև հին ավանդութեամբ Ծարայի և Գուշարի մասին, որը պահպանուած է Սորենացու պատմութեան մեջ:



Կիմմերական, սկյութական և սարմատական ցեղերի տիրապետութեան հաստատուածը հայկական լեռնաշխարհի հյուսիսում՝ Կողքերից մինչև Մեղական երկիրը՝ անսպասելի մի նոր հետեւութուն է, որ բոլորովին նոր ուղի է բանալու Հին Հայաստանի հետուրարտյան շրջանի պատմական ուսումնասիրութեաններին համար: Մեր քննութեան եղբակացութեանները ցույց են տալիս, որ երբ արմենները վերին Տիգրիսի և Արածանիի հովիտները կողմից կամաց կամաց բարձրանում էին դեպի հյուսիս և արեւելք՝ մոտավորապէս նույն այդ ժամանակ կիմմերական-սկյութական ցեղերը, որոնք արդէն սթեբոբը դարում (մեր թվ. ա.) հաստատուել էին Ուրարտուի հյուսիս արևմտակողմում՝ հեռու հետև իջնում էին դեպի հարավ և արևմուտք և Տասը հազարի նահանջի ժամանակ զանվում էին Արարատյան դաշտում և հարևան էին մեղացիներին:

Մրանց առաջխաղացումը և տարածումը դեպի հարավ կանգ է առել, ըստ երևութիւն, երբորդ կամ երկրորդ դարերում մեր թվականութեանից առաջ: Հենց այս ժամանակաշրջանում Այրարատը կենտրոն է դառնում նախ Երվանդյան և ապա Արտաշեսյան թագավորութեան, և այնուհետև կիմմերական,

¹ Տես, Адохь, Армения в эпоху Юстиниана, էջ 425.

սկյութական և սարմատական ժողովուրդները, ենթարկվելով
հարավից եկած հայերի իշխանության, մեծ մասամբ, խառնվել
են սրանց հետ և հայացել:

Հարավային Ռուսաստանից ներդադրած այդ ժողովուրդնե-
րի ավելի քան հինգհարյուր տարվա քաղաքական և կուլտու-
րական մեծ դերը Հայաստանի հյուսիսում և նրանց միաձուլումը
հայերի հետ պատմական մի նոր իրողություն են, որ այսուհետև
պետք է նկատի ունենան ո՛չ միայն պատմագետները, այլ նաև
լեզվաբաններն ու հնագետները:

О НЕКОТОРЫХ ПРОБЛЕМАХ ИСТОРИИ ДРЕВНЕЙ АРМИИ И ЗАКАВКАЗЬЯ.

ПОДРОБНОЕ СОДЕРЖАНИЕ

Как известно, многие, даже наиболее существенные проблемы истории древней Армении и Закавказья, несмотря на значительное число исследований, посвященных им, или слабо изучены или же вовсе не разрешены.

До сих пор еще не установлено с достаточной определенностью направление пути, по которому вторглись в Закавказье в восьмом веке до нашей эры киммерийско-скифские племена. Не решен вопрос о маршруте отступления через Армению Ксенофонта и Десяти тысяч греков. В исторической литературе совершенно игнорировалась, кроме того, выдающаяся военная и торговая роль Мэотидско-колхидской дороги, через которую южно-русские степи находились в ближайшем и теснейшем общении с древними культурными народами Закавказья и Ближнего Востока.

В предлагаемом очерке, путем совокупного рассмотрения сведений первоисточников, как этим, так и другим спорным проблемам, дано новое объяснение.

1. ПУТЬ КИММЕРИЙСКОГО НАШЕСТВИЯ ВОСЬМОГО ВЕКА (до н. эры) И ЗАНЯТИЕ КИММЕРИЙЦАМИ СЕВЕРО-ЗАПАДНЫХ ОБЛАСТЕЙ АРМИИ

Как известно, во второй половине восьмого века до нашей эры киммерийцы, повидимому, в союзе со скифами,

¹ Доложено на заседании общего собрания Академии Наук Армянской ССР 11 апреля 1944 г.

прошли опустошительной волной по Закавказью и Малой Азии. В исторических трудах прочно установилось мнение, что нашествие это шло в направлении с Северного Кавказа на юг через Дарияльский проход¹. Однако, предположение это, приводимое обычно без всякого обоснования, находится в явном противоречии с сообщениями первоисточников и поэтому не может быть признано правильным.

Крайне важны о походе киммерийцев, прежде всего, сообщения Геродота.

1. Геродот, I, 103—104:

«Они [скифы] вторглись в Азию, изгнав киммерийцев из Европы, и, преследуя бегущих, пришли таким образом в Мидийскую страну. От Мэотидского озера до реки Фасиса и колхов тридцать дней пути для хорошего хода. Из Колхиды же не длинен путь и до Мидийской страны. Между двумя этими странами находится лишь один народ каспейры; пройдя через их страну, можно попасть в Мидию. Скифы, однако, вторглись не этим путем. Они, сбившись с дороги, пошли окольным, гораздо более длинным путем, имея справа Кавказские горы».

2. Геродот, IV, 12:

«Скифы, преследовавшие их [киммерийцев] и вторгшиеся в Мидийскую страну, сбились, очевидно, с пути. Киммерийцы все время бежали вдоль моря, скифы же преследовали их, имея справа Кавказские горы, пока наконец вторглись в Мидийскую землю, повернув с дороги внутрь страны».

Приведенные свидетельства Геродота, основанные на греческом предании, в некоторых пунктах могут оказаться, конечно, спорными. Предполагают, например, что скифы пришли в Переднюю Азию не для преследования киммерийцев, а для завоеваний и грабежа. Свидетельства Геродота крайне любопытны, однако, в том отношении, что путь вторжения киммерийцев в Закавказье указан в них по Мэотидско-колхидской дороге, а скифов—через Дербентский

¹ См. *Mirus, The Scythians and Northern nomades, Cambridge Ancient History, vol. III, глава IX.*

проход. Грекам, следовательно, был известен доступный и удобный прибрежный путь из Приазовья в Колхиду и Армению, который в настоящее время игнорируется в исторических трудах.

Первоклассное значение этого древнего пути, по моему, не подлежит ни малейшему сомнению. Южная часть этого пути от Артаксаты до реки Фасиса-Риона и оттуда до Севастополя описана в римской географической карте, известной под названием *Tabula Peutingeriana*. Она подробно рассмотрена и выяснена в историко-географическом моем труде «Главные пути древней Армении» (стр. 117—135, 244—246). Линия эта шла из Артаксаты через нынешние Аштарак и Ганглиджу в Хоспию и оттуда через нынеш. Ахалцих, Абастуман и Рион в Севастополь—Диоскурию.

Северная часть этого пути из Диоскурии в Мэотиду пролегла вдоль восточного побережья Черного моря. Станционные пункты упомянуты в географическом труде седьмого или восьмого века (п. н. эры) Анонима Равеннского¹.

О том, что нашествие киммерийцев 8-го века (до н. э.) следует предположить вдоль побережья Черного моря и через Колхиду, дают косвенное сведение также и ассирийские источники. В них упоминается поражение в земле Гамирра урартского царя Русы I (730—714 до н. эры), о чем ассирийскому царю Саргону (722—705) писали его агенты и шпионы. В одном из этих писем, посланных Саргону его наместником Ашурисуом, имелось ясное указание на то, что киммерийцы находились в то время к северо-западу от Урарту позади стран Гуриани и Нагну², местонахождение которых, как выяснено халдоведами, следует предположить близ нынеш. Карса и Лениакана³.

Можно поэтому с уверенностью заключить, что киммерийцы находились тогда в северо-западных районах Ар-

¹ См. *K. Miller, Itineraria Romana, Römische Reisewege an der Hand der Tabula Peutingeriana, Stuttgart, 1916, стр. 653.*

² См. *Б. Б. Пистровский, История и культура Урарту, Ереван, 1914, стр. 295.*

³ См. *Мещанинов, Халдоведение. Баку, 1927, стр. 23 и 32, Ксанция, История Урарту (на арм. языке), Ереван, 1940, стр. 181, 182, 185, 186 и др.*

мянского нагорья, примыкавших к южной линии Мэотидско-колхидской дороги, по которой они, как свидетельствует Геродот, проникли в Закавказье.

Подтверждение этого вывода, что киммерийцы занимали в восьмом веке (до н. э.) не Кападокию, как полагают халдоведы¹, а местности близ Гуриани к югу от Колхиды, мы находим и в Географии Страбона, который указывает, что Гуриани, т. е. жители Гуриани, соседи киммерийцев, жили «выше армян» на севере.

«Рассказывают, — говорит Страбон, — что одна часть айнианов заняла Уйтию, а другая обитала выше армян над Абом и Нибаром; эти горы—части Тавра; Аб тянется подле пути к Экбатане мимо храма Бариды. Говорят также, что часть фракийцев, называемая сарапарами или головорезами, жила за Арменией в соседстве с гурианиями и мидийцами. Сарапары звероподобны и неукротимы, живут в горах подобно скифам; отрубая головы и снимают черепа, что означается словом «сарапары»².

Проникшие в северо-западные районы исторической Армении киммерийско-скифские племена, как нетрудно заключить из сообщений ассирийских и других источников, обосновались здесь надолго. В конце восьмого века (до н. э.) они упоминаются в качестве данников Урартийского царства, а в седьмом веке в качестве союзников урартийского царя Русы II (685—645)³. Вскоре после этого началась длительная агония Урартийского царства и киммерийско-скифские племена распространились постепенно на юг и заняли здесь древние области исторической Армении—Вананд, Ширак, а затем также и Айраратскую равнину.

О некоторых киммерийско-скифских народностях, расселившихся в этих областях, имеются сведения у писателей

¹ *Пиотровский*, История и культура Урарту, стр. 295, *Мещанинов* Халдоведение, стр. 41, *Капанцян*, История Урарту, стр. 200—202.

² *Strabo* XI, 14, 14 (перевод *Мищенко*).

³ См. *Пиотровский*, Урартское государство во второй половине VIII в. до н. э. Вестник древней истории, 1939, № 1, стр. 70, *Мещанинов*, Халдоведение, стр. 51, *Капанцян*, История Урарту, стр. 213.

греко-римской эпохи. К числу этих народностей, вероятно, принадлежали сарапары¹, которые упомянуты в вышеприведенном свидетельстве Страбона. К этой же группе народов относятся также и сакасины, упомянутые у Плиния.

«Область Тасие [вероятно, Ташир] и Триаре [вероятно, Триалет],—говорит Плиний,—простиралась до горной цепи Париадра. Далее находились безлюдные местности Колхиды, возле которых против Керавнийских гор жили арменохалибы. Земли мосхов простирались до реки Ибера, которая впадает в реку Куру. А под ними жили сакасыны и затем макроны до реки Апсара [нынеш. Чороха]»².

Упомянутые в приведенном свидетельстве Плиния сакасыны (Sacassani), как видно из показаний этого сообщения, отнюдь не тождественны с утийскими саками, жившими в одном из кантонов Отены, который, как полагает Страбон³, был назван по их имени Шакашеном. Можно с полной уверенностью предположить, что часть саков, названная у Плиния сакасанами и жившая в Карсской и Ленинанканской областях, прибыла вместе с киммерийцами по Мэотидско-колхидской дороге, а другая часть, жившая в Шакашене, прибыла в Отену через Дербентский проход, вероятно, в седьмом веке (до н. эры).

То же самое следует сказать и об айнианах, упомянутых у Страбона⁴. Одна часть их, как свидетельствует Страбон, поселилась в Отене, другая часть—в Шираке, а третья, повидимому, спустилась вместе с авангардом киммерийцев через Урарту в Малую Армению и Каппадокию и осела в районах близ Ани—Камаха. Как совершенно правильно ука-

¹ Слово „сарапара“, означающее буквально „головорез“, Адонц и Капанцян ошибочно переводят „голово-отрезанный“ и неправильно сопоставляют с именем предка Ширакских князей Камсараканов Kam-sar, которое, как указывает Хоренский (II, 87), значит „с недостаточной круглотой черепа“, см. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 425 и Капанцян, Науч. труды Ерев. Гос. Унив., т. XIV, 1940, стр. 373.

² Plin. Nat. Hist., VI, 11, 1 (изд. Littré).

³ Strabo, XI, 8, 4 (511).

⁴ Там же XI, 14, 14 (531).

зано Адонцем¹, замок Ани в Шираке, Ани—Камах в Даралии, как и Hani в Пайтакаране, названы так по имени народа Ainiani.

2. ПУТЬ ОТСТУПЛЕНИЯ ДЕСЯТИ ТЫСЯЧ ГРЕКОВ ЧЕРЕЗ СТРАНУ СКИФИНОВ И МЕСТОИЗЖИВАНИЕ РЕКИ АРПАЗА И ГОРОДА ГЮМНИИ

Предложенное мною новое предположение о пребывании и расселении киммерийцев и скифов в районах древнеармянских областей Вананда и Ширака не только дает нам возможность выяснить одну из интереснейших проблем этнографии древней Армении, но, одновременно, проливает новый свет на спорный вопрос о направлении пути Ксенофонта и Десяти тысяч греков.

По словам Ксенофонта, Десять тысяч греков, отступавшие через Армению к Черному морю, двигаясь из страны тахов, прибыли в область халибов и, пройдя эту страну, вышли к реке Арпазосу.

«Оттуда [из страны халибов],—говорит Ксенофонт,—греки пришли к реке Арпазосу, шириною, в четыре плетра. Затем они прошли через область скифинов в течение четырех дней двадцать парасангов и пришли по равнине в деревни, в которых они остались три дня и взяли для себя провиант. Оттуда они прошли в четыре дня двадцать парасангов и пришли к большому, цветущему и многолюдному городу Гюмнии. Правитель страны послал грекам оттуда проводника, чтобы тот повел их через враждебную скифинам страну. Придя к ним, проводник сказал, что он в течение пяти дней приведет их в местность, откуда они увидят море; если не увидят, заявил он, то пусть его убьют. После того как он, сопровождая их, вошел в враждебную скифинам

¹ См. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 56—57 и 420. Сравни также предположение Андреаса о названии Hani, Pauly-Wiss. Real-Encyclopedie (Aintana).

² Xenoph., Anabasis, IV, 7, 18—21 и 8, 1—2.

страну, он стал подстрекать их, чтобы они сожгли и уничтожили страну. Таким образом стало ясно, что он пришел вместе с ними именно для этого, а вовсе не из благосклонности к грекам. На пятый день они пришли к горе, которая называлась Техесом. Когда находившиеся впереди взойшли на гору, поднялся сильный шум»....

(Греки увидели оттуда море и были обрадованы.)

«Оттуда греки прошли через страну макронов в три дня десять парасангов. В первый же день они пришли к реке, отделяющей область макронов от области скифинов. Справа их находилась трудно проходимая местность, а слева другая река, в которую впадала та, которая была пограничной и через которую нужно было перейти».

Из приведенного сообщения Ксенофонта видно, что соседями скифинов были—очевидно с запада — макроны. Плиний, как мы видели, также свидетельствует, что рядом с сакасами, которые тождественны, без сомнения, со скифинами или скифами, около реки Апсара, т. е. нынеш. Чороха, жили макроны. Эти сходные и крайне ценные указания Ксенофонта и Плиния подтверждают наше предположение о пребывании киммерийцев и скифов в северо-западных областях исторической Армении и определенно свидетельствуют, что во время отступления Десяти тысяч греков (в 401—400 г. до н. э.) скифины занимали не бассейн реки Арпазоса—Куры к востоку и западу от нынеш. Тбилиси, как предполагает Худадов¹, а районы нынеш. Карсской и Ленинанканской областей, а также и Айраратскую равнину.

Исходя из этих же данных, можно также с полной уверенностью предположить, что упомянутые в приведенном сообщении Ксенофонта река Арпазос, в долине которой жили скифины, а также и город Гимния находились в вышеуказанных нами районах.

¹ В. Н. Худадов, Отступление Десяти тысяч греков, Исторические записки, том I, Москва, 1937, стр. 123 и сл. Ср. W. F. Ainsworth, Travels in the tract of the Ten Thousand Greeks, London, 1844, Robiou, Itinéraire de Dix Mille, Rennes; 1856.

В исследованиях, посвященных изучению пути отступления Десяти тысяч, река Арпазос обычно отождествляется с Чорохом, с западным Арпа-чаем, или же с Курою. По предлагаемому же мною новому толкованию, маршрут Десяти тысяч к реке Арпазосу и ее долине, где находились селения скифинов, устанавливается не в сторону означенных рек, а по направлению к реке Араксу и в Айрататскую равнину.

Мне кажется, можно считать более чем вероятным, что в греческом тексте «Анабазис»-а название Арпазос (Ἀρπαζός) есть простая описка вместо Аразос (Ἀρῶζος). Искажение это произошло, повидимому, под влиянием греческого слова ἀρπάζω «похищаю», привычного для языкового мышления греков.

По свидетельству Ксенофонта, река Арпазос имела и ширину 4 плетра (около 120 метров). Такой большой и широкой рекой является, действительно, река Аракс или Араз там, где она, вырываясь из горных теснин, течет по Айрататской равнине. Указание Ксенофонта о ширине Арпазоса в настоящее время трудно проверить, так как после отступления Десяти тысяч река Аракс, как известно из сообщений древнеармянских источников¹, переменяла свое русло и отклонилась на юг.

Отождествление Арпазоса с рекой Араз—Араксом дает возможность определить также и местоположение города Гюмнии.

Путь отступающего греческого войска из Айрататской равнины, где находились селения скифинов, устанавливается с достаточной обоснованностью по южной линии Мэотидско-колхидской дороги в древнеармянскую область Ширак. Не трудно поэтому догадаться, что «большой, цветущий и многолюдный город Гюмния [Γυμνιάς]», соответственно указанному у Ксенофонта расстоянию, может быть отождествлен с древнеармянским городом Кумайри, с нынешним Гюмри—Ленинаканом. В греческом тексте «Анабазис»-а название этого города Γυμνιάς есть, вероятно, искажение: Γυμνιάς вм. Γυμνιάς. Повидимому, иска-

¹ См. Моисей Хоренский, перевод Н. Эмина, II, 39.

жение и этого названия, как и "Αρπαβος-а, возникло опять таки путем так называемой народной этимологии и осмысления непонятного грекам слова под влиянием греческого τριψός «голый».

Определением местоположений и названий Арпазоса и Гюмнии вопрос о направлении пути отступления Десяти тысяч, как будет выяснено в подробном моем исследовании, посвященном этой проблеме, получает совершенно иное освещение и спорный путь устанавливается более точно и более обоснованно, чем это сделано в предыдущих трудах.

3. ВЫХОД НА МЭОТИДСКО-КОЛХИДСКУЮ ДОРОГУ, КАК ГЛАВНАЯ ЦЕЛЬ ОТСТУПАВШИХ ГРЕКОВ

Научные труды, посвященные вопросу об отступлении Десяти тысяч, имеют один существенный недостаток. Европейские ученые, изучавшие этот вопрос, недостаточно были знакомы с исторической географией древней Армении и не учитывали, в частности, исключительного значения южной линии Мэотидско-колхидской дороги, шедшей через Армению в восточные порты Черноморья.

Этот путь, подробно описанный в *Tabula Peutingeriana*, рассмотрен и выяснен, как было сказано выше, в историко-географическом моем труде «Главные пути древней Армении». До этого, в исторических и географических трудах господствовало мнение, будто в эпоху Ксенофонта основным и естественным путем из Армении в прибрежные районы Черного моря был путь из Внутренней Армении в Трапезунт. Это мнение, однако, более чем спорно. Путь к Трапезунту через горный массив Понтийского хребта был проложен, как полагают бельгийские ученые братья Cumont¹, в период римского владычества и едва ли существовал во время Ксенофонта. Для выхода из Армении к берегам Черного моря имело в то время важное значение не этот путь, а магистральная дорога, шедшая из Армении в Колхиду, которая,

¹ *Fr. et Eug. Cumont, Studia Pontica, II, Bruxelles, 1906, § 4.*

вероятно, была известна отступавшим грекам из сообщений Истории Геродота и других греческих авторов.

Можно поэтому полагать, что с самого начала своего отступления греки сознательно шли не в сторону нынешнего Эрзерума или же Пассинской долины, как обычно утверждают, а в сторону Айрататской равнины и древнеармянской области Ширак, где находилась южная ветвь Мэотидско-колхидской магистрали.

По сообщению Ксенофонта, отступавшее греческое войско вошло в Армению, перейдя реку Кентрит (нынеш. Бохтан-су). Оттуда оно, после шестидневного марша (= 30 парасангам, около 150—180 километров), спустилось через Тавр в Мушскую равнину и дошло до реки Телебоас (нынеш. Кара-су). Продвигаясь отсюда на северо-восток, греки прошли вновь в течение шестидневного марша 30 парасангов и прибыли к реке Евфрату—Арацанию и перешли эту реку недалеко от ее истоков.

